№ 52 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 9 — 1906 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 9 № 52

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի: Մարտի 1-ից մինչև 1 յունիսի 2 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Նատալիա Բէգլարեան, Հռիփսիմէ Կարապետեան Ղազանջեանները, Սաթենիկ Դաւթեան, Հայկանուշ և Յակովբ Բէգլարեան Մովսիսեանները խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին, առաջինը իր անմոռանալի ամուսնու, երկրորդը՝ սիրելի հօր, իսկ վերջինները իրանց բազմերախտ փեսայ՝

ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼԵԱՆ ՂԱԶԱՆՋԵԱՆՑԻ

մահը: Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ, շաբաթ օրը, ամսիս 11-ին, առաւօտեան ժամի 10-ին, իր բնակարանից Разъѣзжая ул. № 15 (Վօրօնցօվի արձանի մօտ) դէպի Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցին: Ամբիծքը ուրբաթ, երեկոյեան ժամի 6-ին:

(հ.ու.) 1—2

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ԶԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԵՐԻՆ ՆՈՒԷՐ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ

1) «Որբիկների արցունքները»	30 կ.
2) «Երկու պահլաւան», (Սասունի հիմնադիրները)	25 կ.
3) «Պատիկ Մհեր»	25 կ.
4) «Սասունցի Դաւիթ», I հ. 40 կ. II հ. 40 կ. նոյնը մի գրքում.	80 կ.
5) «Զգացմունք»	40 կ.
6) «Հենրիխ Պեստալոցցի» (մանկավարժական).	30 կ.

Այս գրքերի վաճառման արդիւնքի 20% յատկացվելու է դժբաղդացած կողենցիների օգտին: Դիմել Կենտրոնական, Գուտտէնբերգ, Թառայեան և Զաքարեան գրավաճառներին, իսկ հեղինակին դիմողները կըստանան 30% զեղչ, կուղարկվի կանխիկ, նաև վերադիր վճարով: Հասցէն՝ Шулаверъ, Григорію Баласанянцъ. (աու) 4—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է առաջն առնել. Համակրելի քայլ. Վերջին տեղեկութիւններ. Մամուլ. Ընդհանուր ուսումնական ժողով Էջմիածնում. Դատաստանական դահլիճից. Ի նպաստ Թիւրքիայի ճնշված ժողովուրդների. Պատմական քսանհինգամեակը. Հողային վէճը. Նամակներ խմբագրութեան. Հեռագիր. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Պատճառներ և հետևանքներ.

ՊԷՏՔ Է ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼ

Մի ինչ որ դաւադրական կամ խուլիգանական դէպք առիթ է տալիս մեզ խօսելու մի կարևոր հանգամանքի մասին:

Այդ դէպքը հետևեալն է:

Այն ժամանակ, երբ հայ-Թուրքական խորհրդակցութեան անդամները քննում էին այն միջոցները, որոնցով կարելի է հարթել այն վէճը, որ բացված է հայ և Թուրք տարրերի մէջ և երբ մեր գաւառները անհամբերութեամբ սպասում էին թէ պատգամաւորները ինչ կասեն, ինչ կը մշակեն և ինչպէս կը նպաստեն խաղաղութեան գործին, Բագւում մի իրարանցում է ընկնում: Թուրքերի մէջ լուրեր են տարածվում, որ իբր թէ Թիֆլիսում յուզմունք է սկսվել, որ իբր թէ Թուրք պատգամաւորները փակվել են և այլն և այլն: Բագուից իսկոյն հեռագիրներ թափվեցին Թիֆլիս: Այստեղից պատասխանեցին, որ լուրերը հիմնովին սուտ են և որ ոչ մի նոյն իսկ հեռաւոր առիթ չէ եղել այդ տեսակ լուրերի համար:

Ահա ձեզ մի նմուշ այնպիսի սադր գործողութեան, որից կարող են առաջանալ մեծ դժբաղդութիւններ և որի նըմանները տեսել ենք մեծ թւով անցեալ տարի:

Մենք առիթ ունեցանք նոյն իսկ Թիֆլիսում, խորհրդակցութեան նիստերի օրերում լսել մի քանի կասկածելի լուրեր և ձևակերպութիւններ, որոնք նպատակ ունէին թիւրիմացութիւններ ստեղծել:

Ընդգծելով ներկայ դէպքերը, մենք կարևոր ենք համարում հրաւիրել առանձին ուշադրութիւն այն բանի վրա, որ միջոցներ ձեռք առնվեն անվնաս դարձնելու չարամիտ մարդկանց դաւադրական խաղերը ու նպատակները և նորից հրդեհի մէջ չը գցվեն մեր երկրի այս կամ այն անկիւնը:

Այստեղ մեր խօսքը չարամիտ և դաւադրական գործողների և նրանց տարածած լուրերի մասին է:

Բայց մեզ յայտնի են դէպքեր, երբ մարդիկ թիւրիմացութիւնների առիթ են դառնում անգիտակցական կերպով, հաղորդելով չը ստուգված լուրեր և այդպիսով իրանք զոհ են դառնում ուրիշի սխալների կամ չարամտութեան:

Մենք աշխատել ենք միշտ պահանջող լինել դէպի այն լուրերի և տեղեկութիւնների ճշտութիւնը, որոնք լոյս են տեսնում մեր լրագրի էջերում և կարող ենք յայտնել, որ շատ քիչ առիթներ ենք ունեցել տեսնելու մեզ այնպիսի վիճակի մէջ, որ ստիպված լինենք մեր հաղորդածը հերքելու և ուղղելու:

Այդ կողմից մեր թղթակիցները եղել են իրանց կոչման բարձրութեան վրա և վստահութիւն են ներշնչում դէպի իրանց հաղորդագրութիւնները: Եւ մենք մեր թղթակիցներից դարձեալ կը խնդրէինք ստուգել տեղական լուրերը և մեզ կարողութիւն տալ համարձակօրէն ասելու ամենքին, որ մենք լիովին պատասխանատու ենք այն բոլորի համար, որ հաղորդում են մեզ նրանք:

Իսկ չը պէտք է մոռանալ, որ մեր ամեն մի սխալից և զանցառու գործողութիւնից աշխատում են օգտվել չարամիտ անձեր և ամեն մի սխալ վերագրել դիտաւորեալ նպատակի լրագրի կողմից:

Այժմ մի որոշ աստիճան հանգստութիւն է տիրում մեր երկրի մէջ: Մենք ուզում ենք յուսալ, որ այդ հանգստութիւնը պէտք է ամրանայ և կամաց կամաց դառնայ կատարեալ խաղաղութիւն: Սակայն այդ նպատակը կարող է իրագործվել, եթէ մի կողմից թշնամացած տարրերը կը գնան խաղաղութեան ճանապարհով միմեանց ընդ առաջ, իսկ միւս կողմից վերացված կը լինեն այն բոլոր թիւրիմացութիւնները, որոնք սերմանվում են չարամիտ ձեռքերով:

Տեղական ազգաբնակութիւնը պէտք է ուշի ուշով հետևէ, որ սուտ լուրերը հընարաւորութիւն չունենան տարածվելու ժողովրդի մէջ և անմիջապէս հերքվեն և վերացվեն ասպարէզից:

Անցեալ տարվայ մեր ստացած դասերը մեզ պարտաւորում են լուրջ վերաբերվել չարամտութեան սերմանած դաւերին և ամեն միջոց գործ դնել չքացնելու նըրանց ազդեցութիւնը մեր իրականութեան վրա:

Ս. Քալանթար

ՀԱՄԱԿՐԵԼԻ ՔԱՅԼ

«Մշակի» այսօրվայ համարում տպված Էջմիածնի նամակից մեր ընթերցողները կը տեղեկանան, որ Վեհ. Հայրապետը որոշել է գումարել տալ այս տարվայ մայիսի սկզբներին մի դպրոցական համագումար, որի միսիան պէտք է լինի մշակել ծրագիրներ թէ Էջմիածնի ճեմարանի և թէ ազգային այլ դպրոցների համար:

Վաղուց զգացվում էր այդպիսի մի համագումարի անհրաժեշտութիւնը: «Լաւ է ուշ, քան երբէք», ուստի հասարակութեան և մամուլի կողմից մնում է միայն ողջունել այդ քայլը և ցանկալ, որ համագումարը դրվի այնպիսի պայմանների մէջ, որ նրան մասնակցողները իսկապէս հանդիսանան հայ դպրոցի կեանքի, պահանջների արտայայտիչներ, մօտիկ ծանօթ հայ ժողովրդի մտաւոր-բարոյական վիճակին, որպէս զի նրա մշակած միջոցները և ծրագիրները համապատասխանեն կեանքի և դպրոցի էական պահանջներին և կարիքներին:

Այն օրից, երբ լուծվեց հայ դպրոցական գործի բախտը, երբ հայ դպրոցների վերաբացման իրաւունքը յայտարարվեց, անմիջապէս պահանջ զգացվեց կանոնաւորել դպրոցական գործը և նոր ծրագիր մշակել հայկական նոր դպրոցի համար, դպրոցի, որ պէտք է ստեղծել ճիշտ ազատագրական շարժման արշալոյսին: Այդ առթիւ մշակվեց նոյն իսկ Վեհ. Կաթողիկոսից մի յատուկ յանձնաժողով, կայացաւ Թիֆլիսում մի փոքրիկ դպրոցական համագումար, ընտրվեց մի երկրորդ մասնաժողով, մի խօսքով մի շարք միջոցներ գործադրվեցին հայ դպրոցի համար նոր ծրագիր մշակելու, ծրագիր, որ համապատասխանէր հայերի կուլտուրական և ժամանակակից եւրոպական առողջ մանկավարժութեան պահանջներին:

Համակրելի է Վեհափառի տնօրինութիւնը՝ հրաւիրել համագումարի մասնակցութեան և հայ մամուլի ներկայացուցիչներին, որովհետև հայ մամուլը իր գոյութեան օրից եղել է հայ դպրոցական գործի զարգացման հզօր ֆակտօրներից մէկը:

Այժմ գործի ամբողջ աջողութիւնը կախված է այն պայմաններից, որոնց մէջ դրված կը լինի համագումարը: Պէտք է աշխատել ձեռք բերել դպրոցական գործերին խորապէս անձնուէր տարրերի, հաստատութիւնների և գործողների մասնակցութիւնը և որքան կարելի է լայն ծաւալով:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ջիվանշիրի գաւառի Սարովբէգում, Մարալեան, Ղահրիլար, Հասանղայա և Նամառ հայ գիւղերը ցանկանալով հաստատվել Թարթառ գետի մօտ, որոնում են իրանց ապագայ բնակութեան համար տեղեր: Այդ գիւղերը հիմնովին կործանված են: Տները ենթարկվել են կատարեալ թալանի: Նոյն իսկ գերանները, աղիւսները տարված են շրջակայ Թուրք գիւղերը: Չը նայելով այն հանգամանքին, որ նրանց հողերը արդիւնաբեր էին, այնուամենայնիւ հայերը հնարաւոր չեն գտնում վերադառնալը: Թարթառի աւազանում նրանք կը ցանկանային հաստատվել Բրուջ, Հաջիքեարավանդ կոչված գիւղատեղերում: Հայերը հաշւում են, որ կորցրել են մօտ մի միլիօն րուբլու արժողութիւն, որից 50,000 րուբլունը հէնց պատրաստ բամբակ է եղել:

—

Զարդախլու, 18 փետրվարի

Ուղիղ մի ամիս սրանից առաջ, յունվարի 18-ին տեղի ունեցաւ Թուրքերի վերջին յարձակումը մեր գիւղի վրա, բայց ինձանից անկախ՝ աննպաստ հանգամանքների շնորհիւ անկարող եղայ մինչև այժմ մի տեղեկութիւն տալ այդ մասին:

Այդ օրը ժամը 10-ին, դիրքի պահապանները Զագամի կողմից բազմաթիւ ձիաւորներ տեսան, միջները շատ չալմաւոր (գլխի փաթթան) ու դրօշակը ձեռներին: Ամբողջ գիւղը իրարանցման մէջ ընկաւ: Այն ինչ, թշնամին հասաւ՝ գիւղից 2 վերստի վրա գտնվող «Սանդար» կոչված տեղը, որ մի կոնաձև բլուր է, սեպացած, երկու անդնդախոր ձորերի միջև: Այդ Սանդարը իշխում է ամբողջ շրջակայքի վրա, իսկ նրանից դէպի գիւղը բաց դաշտ է: Ամուր դիրքեր գրաւելով այդտեղ՝ բազմաթիւ թշնամին, կիսաշրջանաձև պատեց հիւսիս արևմտեան կողմից: Մինչ թշնամին իր դիրքերն էր ամրացնում, մեր քաջ երիտասարդները հասան և սկսեց մի կատաղի կռիւ, որ գերազանցում էր մինչ ցարդ եղածներին: Թշնամին ոչ միայն բազմաթիւ էր այլ և լաւ զինված: Հրացանի միահամուռ ճայթումից ձորերն էին որոտում և մարդու վրա սարսափ բերում:

Անձնապաշտպանութիւնը ակարին էլ ոյժ է տալիս: Թուրքերը մի քանի անգամ «եա Ալի» գոչելով ուզեցին գրոհ տալ մեր վրա, բայց մեր քաջերի յաջողակ կրակից՝ մի քանի զոհեր ևս տալով, յետ նահանջեցին: Դրութիւնը կրիտիքական էր, մեր դիրքերը շատ անյաջող էին, թշնամուն դիմադրելու համար: Այդ ժամանակ հինգ կորիճներ վճռեցին, ինչ էլ լինի, թշնամու թիկունքն անցնելով դիրքից դուրս քշել: Սա այնպիսի յանդուգն ձեռնարկութիւն էր, որ մի փոքրիկ անյաջողութեան ոչ միայն կարող էին ամենքը զոհ գնալ, այլ և գերի ընկնելու վտանգ կար: Տեղացող գնդակների միջից անցնելով, փորսող տալով, հասան մերձակայ ձորը և օձապտոյտ ճանապարհներով, քարափների ծերպերով անցան բլրի միւս կողմը: Հէնց որ լսվեց «յառաջ» ազդանշանը, երկու կողմից գրոհ տուին մեր քաջերը, ուշք չը դնելով տեղացող գնդակների տարափին: Թշնամին իրան երկու՝ թէև փոքրաթիւ, կրակի մէջ զգալով, փախուստ տուեց, աւար տալով 6 ձի և շատ ճարպիկութեամբ քաշ տալով կաւի դաշտից շատ դիակներ: Մենք զոհ տուինք մի քաջ երիտասարդ և երկու վիրաւոր: Թշնամին մի քանի յուսահատական ճիգեր արեց նորից յառաջ գալու, բայց յաջողութիւն չունեցաւ և ուղիղ ժամի 5-ին վերջնական հալածվեց մեր սահմաններից: Արդէն մութը վրա էր հասել, որ մեր քաջերը երգով դարձան: Սակայն յաղթութեան ուրախութիւնը տխրութեամբ համակեց մեր սիրտը տուած զոհի համար: Այսպիսով մեր դրացի Թուրքերի՝ «Զարդախլուն այս անգամ անպատճառ կառնենք» պարծենկոտութիւնը, նորից ի դերև ելաւ: Նրանք հեռաւոր տեղերից օգնական ոյժեր խնդրելով կամեցան իրանց սար երթալու ճանապարհը սրով հարթել: Այս կռւին մասնակցում էին VI և V մասի բոլոր Թուրքերը, բացի հեռու տեղերից՝ Բաղմանլարից, Ղարաբաղի և Ղազախի կողմերից, Ելախից, նոյն իսկ Բագուի շրջանից, եկածները[1], որոնք ունէին ամենաընտիր զէնքեր:

Գ. քահ. Մ.

—

Ոսկանապատ, Գանձակի շրջան, մարտի 4-ին:

Անցեալները Գանձակի գաւառապետի հրամանի համաձայն՝ Բանանց գիւղն էին հաւաքվել հասարակութեան բոլոր գիւղերից, մի մի անգամ իւրաքանչիւր ծխից: Գիւղացիները նախ կարծեցին թէ այս համագումարը տանուտէրի կամ այլ պաշտօնեաների ընտրութեան համար է, բայց դուրս եկաւ, որ նա շրջում է և յորդորում ժողովրդին թողնել թշնամական ձգտումները և հաստատել Թուրքերի հետ առաջվայ դրացիական երթևեկութիւնը և մտնել բարի հարևանութեան մէջ, աւելացնելով որ ինքը միայն յայտարարում է ժողովրդին գեներալ-նահանգապետի կամքը: Գ. գաւառապետը ասել է նոյնպէս, որ ժողովուրդը պատրաստ լինի առաջի պահանջին համաձայն բոլոր զէնքերը յանձնելու. Ինքը եկաւ Ոսկանապատ, գիշերեց այստեղ և միւս օրը ճանապարհվեց դէպի Գետաշէն գիւղը նոյն նպատակով, ուղարկելով երկու ստրաժնիկ Այրում Թուրք հասարակութեանը զանազան յանձնարարութիւններով:

Հէնց որ գաւառապետը Ոսկանապատից ուղևորվում է դէպի Գետաշէն, յետևից նոյն օրը Թօփալհասանլուեցիները յարձակվում են Բրաջրի հովիւների վրա և ամբողջ հօտը քշում դէպի Բաղմանլար, աւազակների, գլուխ կտրողների աւետեաց երկիրը: Բրաջուրցիները հետամուտ են լինում աւազակներին, որպէս զի ոչխարը խլեն նրանցից, բայց ճանապարհի կիսումը կանգնում են նրանք, մի փոսի մէջ գտնում են երկու դիակ. մէկը խաչակապցի Յակոբ Մովսէսեանի, միւսը Բանանց գիւղացի Գէորգ Խաչատրեանի, որոնք երկու օր առաջ Բանանցից ճանապարհվել են դէպի Գանձակ և այդտեղ դարանամուտ բօրենիների ճիրանները ընկել: Էլ ինչ ասել կուզէք, որ այսպէս խաղաղութիւնը հաստատ կը լինի և տևողական: Դիակներից կտրած տարված էին ձեռքերի դաստակները և ականջները իբրև փաստալի ապացոյց կատարված եղեռնագործութեան: Այս եղեռնագործութիւնը կատարվում է այն ժամանակ, երբ ժողովուրդը քիչ-քիչ հանդարտվում էր, երբ յուզված մտքերը խաղաղվում էին, երբ նրան ադմինիստրացիայի հզօր ձայնով զգուշացնում էին թշնամական ոչ մի ցոյց չանել դէպի «խաղաղասէր և դիպլոմատ Թուրքերը»...

Դէպի Այրում ուղարկված ստրաժնիկների վրա Թուրքերը գնդակի տարափ են թափում և նրանք մի հրաշքով ազատվում են վերահաս մահից: Այս երրորդ անգամն է, որ պաշտօնէութիւն է անում լեռնային կիսավայրենի Այրում ցեղը. առաջին անգամ բռնում են երեք ստրաժնիկի, զինաթափ անում, յետոյ ուզում են սպանել նրանց, բայց մի կերպ ազատվում են. սրանց մէջ է լինում և մի օս, որը հայի շատ նմանութիւն ունի. սրան վայր են ձգում և մերկացրած դաշոյնը քանի անգամ դնում կոկորդին, սակայն երկու միւս ընկերները միջամտում են, աղաչում, որ այդ չանեն, փոխարէնը տալիս են ինչ որ մօտներին լինում է: Ընկերներից մէկը ռուս է, միւսը գերմանացի: Այս դէպքից մի քանի օր անցած գնում է նոյն այրումների մէջ այս մասի ռուս պրիստաւը, նրան ևս կալանաւորում են. սրան էլ ազատում է գերութիւնից գաւառապետի օգնականը, այս մասի նախկին պրիստաւը և այրումներին լաւ ծանօթը: Ծիծաղելին այն է, որ գերի ընկած պրիստաւը (այժմ նա փոխադրված է ուրիշ տեղ) տեղիս հայերին խրատում էր այրումների հետ հաշտ ապրել, այն այրումների, որ Ոսկանապատից չորս մարդ անտառում փայտ կտրելիս սպանեցին և հինգերորդին էլ վիրաւորեցին: Գ. պրիստաւը այդ գայլի աւետարանը այն ժամանակն էր կարդում, երբ ինքը դեռ «այրում» ասած հրէշների թաթում չէր խմել. դժբախտաբար գերութիւնից ազատված պրիստաւին այլ ևս չը տեսանք, որ հարցնէինք թէ արդեօք այժմ ինչ կարծիք ունի գերողների մասին:

Գաւառապետը խիստ միջոցներ ձեռք առաւ. այրումներից տուգանքներ պահանջեց, էկզեկուցիա նշանակել տուաւ 75 կազակներով, երեք օրից յետոյ էկզեկուցիան վերցրեց, 15 Թուրք խռովարարների բանտ ըրկեց և գրանով բանը վերջացաւ: Բայց ոսկանապատցիներին կատարող այրումները դեռ ազատ շրջում են. տեսնենք արդարադատութիւնը երբ կը սկսէ իր գործը:

Այսօր մի մեծ զօրամաս բաղկացած կօզակներից և հետևակ զինւորներից, սպաների առաջնորդութեամբ հարևան գիւղերից ժամանեցին տեղս նոյն խաղաղարար միսիայով. Թուրքերի հետ բարի դրացիութիւն անելու նպատակով ճաշելուց յետոյ վերադարձան: Մեզ խաղաղ ապրելու քարոզները աւելորդ են, թող այդ տան նրան, ով որ կարօտութիւն ունի, ով որ ճանապարհ է կտրում, ով որ տոգորված է աւազակային բնազդներով...

Ն. Գրիգորեան

—

Սուրմալուի գաւառ, մարտի 2-ին

Թէև մեր գաւառապետ Դուդնիկօվի ներկայութեան ժամանակ ոչ մի ընդհարում չեղաւ, թէև նրա եռանդուն աշխատութեամբ չը փասվեցինք հայերս, բայց այժմ օրինակները պարզ ցոյց են տալիս, որ մի օր Սուրմալուի կղզիացած հայերս կենթարկվենք Թուրքերի յարձակումներին:

Ահա օրինակներից մի քանիսը: Ա) Դաշբուրունի գիւղից երկու հայեր, Կիրակոս ու Կարօն, գնում են մօտակայ քիւրդ գիւղը «Բէյրէն» մացառի համար: Տեսնելով քրդերի վերաբերմունքը, իրիկնապահին շուտ վերադառնում են տուն: Մօտիկ քարահանքին հանդիպում են զինված քրդերի, որոնք քարի տակից դուրս են գալիս հայերի առաջը, բռնում են ու քաշում քարահանքը: Սրերը մերկացնելով, սպառնում են դրանց, որ ասեն, թէ ինչ կազմակերպութիւն կայ գիւղում, ովքեր են գիւղի ամենահարուստները, ում կնիկն է շատ սիրուն, և ով է պաշտպանում գիւղը, զէնք շատ կայ թէ քիչ: Ի հարկէ հայերը լինելով ճշմարտախօսներ, պարզում են գիւղի ներկայ դրութիւնը: Քրդերը ազատում են դրանց, աղը ուտացնելուց յետոյ:

Բ) Իգդիրի ճանապարհի վրա Թուրքերը վիրաւորում են մի Թուրքի՝ հայկական շորեր հագած, որոնց ճանաչել է վիրաւոր Թուրքը:

Գ) Գիլլուջա կոչված հայ գիւղացիներից մէկը երկար ժամանակ մշակ է լինում հարևան հայ գիւղում: Վերադառնալով տուն՝ ճանապարհին Փուրսաղ կոչված Թուրք գիւղի մօտ, ձորի մէջը պատահում է Մէյթի-բէկ եղեռնագործ զազանի խմբին, որը յարձակվում է խեղճ մարդու վրա սպանելու նպատակով, իսկ հայը երեսի վրա ընկնում է ոտքերի տակը և աղերսում է չը սպանել իրան: Մէյթի-բէկը սպառնում է հային, որ ասէ թէ որքան ոյժ կայ իրան գտնված հայ գիւղում: Խեղճ մարդը կրկին աղերսում է, որ ոչինչ չը գիտէ, իսկ գարշելի աւազակը սպառնում է, որ իր ցոյց տուած տեղը համբուրէ, և չեն սպանի նրան: Քարշ են տալիս քարերի վրա, հարուածում են խէնչալներով. գիշերը եկաւ տուն, արիւնլուայ հազար ու մի տեղից վիրաւոր:

Դ) Հախվէրիս հայ գիւղացիներից մէկ հիւսն գնում է «Քթիկ» Թուրք գիւղը աշխատելու համար. իր հիւրանոցում եղած է լինում մի Թուրք պրօպագանդիստ իր հետևակներով: Նա բորբոքում է թուրքերին թէ «հայերը մեր խաներից X-ին մորթեցին և բաժանեցին շներին, իսկ դուք հային հիւրասիրում էք: Հայը հասկանում է որ վտանգ կայ, մի կերպ պատկած տեղից դուրս է գալիս փախչում է առանց շորերի, դէպի Արաքսի ափը և այնտեղից Ղարաղալի պօստը, հասկացնում է վաղմնիկների ուրեադնիկին իրան պատահած դէպքը: Գալիս են «Քթիկ» և այնտեղից գտնում են հայի շորերը և բանելու գործիքը:

Ե) Նամակս փակելու ժամանակ լուր եկաւ, որ Ալուդամար գիւղից մի հայի Թուրքերը սպանեցին: Այս բոլորով հանդերձ դարձեալ հայերս աշխատում ենք միութեան կապը ամուր պահել:

Մեզանում արդէն գարուն է, բայց յաճախ սաստիկ քամիներ են փչում: Ցորեն—ալիւր չը կայ, շատ թանկ է: Ասում են, որ սուլթանը զօրք շատ է բերել սահմանը: Հայ և Թուրքի յարաբերութիւնները լարված են: Ինքնապաշտպանութեան գործում մենք շատ աղքատ ենք:

—

Ստացված տեղեկութիւնները հաստատում են, որ Ելախի և Բարդայի մէջ, հանրակառքի կողոպտողները եղել են մի խումբ Թուրք-աւազակներ, Սիբիրից փախած Ուզար-Մամէդ-Նաֆթալի օղլու առաջնորդութեամբ: Այդ աւազակախումբը հանրակառքը կողոպտելուց յետոյ, թաքնվել է Գանձակի գաւառում: Աւազակներին հետամուտ լինելու և կողոպտված իրերը որոնելու համար անհրաժեշտ կարգադրութիւններ արված են արդէն:

ՄԱՄՈՒԼ

Հայ-Թուրքական համագումարը տեղական ամբողջ մամուլի քննութեան և նոյն իսկ յարձակումների առարկայ է դարձել, մանաւանդ վրաց մամուլի կողմից: Տարակոյս չը կայ, որ որոշ ուղղութեան մամուլի կողմից համագումարը չէր կարող համակրութեան հանդիպել. տարակոյս չը կայ, որ մամուլի իրաւունքը և պարտաւորութիւնն է քննադատութեան ենթարկել համագումարի գործունէութիւնը, սակայն այդ քննադատութիւնը չը պէտք է օբեկտիվութեան և անաչառութեան սահմաններից անցնէ, մի բան, որ չէ նկատվում ոչ վրաց մամուլի, ոչ դադարած «Возрожденіе», «Кавказское Утро» և այժմ նրանց յաջորդած «Современникъ» թերթերի և նոյն իսկ հայ «Յառաջ» լրագրի մէջ:

Վրաց «Ցնօբիս Փուրցելի» թերթը ոչ միայն սկեպտօրէն է վերաբերում համագումարի աշխատութիւններին, այլ և ուղղակի թշնամօրէն.

«Փորձեցէք—ասում է նա—կասկածել նրանց (հայ և Թուրք պատգամաւորների) անկեղծութեան մասին և իսկոյն ձեզ կը հռչակեն ժողովրդի թշնամի, կը մեղադրեն պրովօկացիայի մէջ, կանուանեն թշնամութիւն սերմանող և կը դամեն խայտառակութեան սիւնին: Բայց մենք բարձրաձայն կասենք, թէ սուտ են խօսում նրանք (այսինքն պատգամաւորները), անկեղծութեան կոմեդիա են խաղում, կախարդութեան վոդեվիլ են տալիս և ով գիտէ, արդեօք չեն պատրաստում իրանց ստութեամբ մի սոսկալի արիւնհեղութիւն և կռիւ, որի մէջ ձգեցին անցեալ տարի բախտից անիծված թշուառ հայ և Թուրք աշխատաւոր ժողովուրդը: Կօնֆերենցիայի նիստերում բաւականաչափ պարզվեց, որ հայ-Թուրքական ընդհարումների պատճառը՝ բիւրօկրատիայի պրովօկացիան է, բայց չը նայելով դրան ոչ Թուրք պատգամաւորները, ոչ հայերը, ոչ «հասարակութիւնը», ոչ մամուլը չը կանգնեցին այն միակ ճանապարհի վրա, որ լոգիքաբար հետևում էր դրանից: Ընդհակառակը, երկու կողմերը սկսեցին անամօթաբար բարբանջել թէ ինչպիսի հաւատարիմ—հպատակ ստրուկներ են Թուրքերը, թէ ինչպէս հերոսաբար կռւում է հայ ժողովուրդը, և նրա «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը բարձր իշխանութեան հետ միասին «ռուսական գործի» համար Անդրկովկասում: Մենք խաղաղութեան ջերմ կուսակիցներ չենք—աւարտում է վրաց լրագիրը—ուստի և դրա համար բռնում ենք խաղաղարար կօնֆերենցիայի կեղծութիւնը: Սուտ կօնֆերենցիան անզօր է հաստատել ամուր խաղաղութիւն. այդ խաղաղութիւնը կը հաստատէ միայն նա, ով իրապէս շահագրգռված է կուլտուրական և քաղաքական վերանորոգման մէջ—աշխատաւոր ժողովուրդը, և ոչ այն պարոնները, որոնք բիւրօկրատիայի առաջ կոմեդիա են խաղում»:

Մենք չենք կամենում հերքել վրաց լրագրի յարձակումները, որովհետև նրանք չեն դիմանում ամենափոքր կրիտիկայի և խորապէս մեղանչում են ճշմարտութեան դէմ հէնց նրանով, որ լրագիրը Թուրք և հայ պատգամաւորներին միատեսակ դեր է յատկացնում, մինչ անաչառութեան ամենափոքր մասնիկը ունեցողը անգամ, որ հետևել է համագումարի դրամատունքներին, գիտէ, որ համագումարում այլ էր հայ պատգամաւորների դերը, այլ Թուրքերի դերը: Մենք կոչված չենք և ամենևին միտք չունենք խօսել Թուրք պատգամաւորների կողմից, բայց ասել թէ հայ պատգամաւորները անկեղծ չեն եղել, թէ նրանք չեն ցանկացել ջերմօրէն խաղաղութիւն հաստատել, այո, հէնց նոյն իսկ աշխատաւոր ժողովրդի համար—դա կատարեալ զրպարտութիւն է, ինչպէս զրպարտութիւն են մի քանի օր առաջ վրաց մամուլի մէջ երևացած յարձակումները հայ պատգամաւորների վրա պ. Ա. Խատիսեանի ճառի առիթով: Այդ ճառի մէջ շեշտված էր, որ հայերը սեպարատիստներ չեն. արդ դրանից եզրակացնում են վրաց լրագիրները, թէ հայերը կամեցել են ասել, որ սեպարատիստները վրացիներն են:

---

[1] Այս եկւորների մասին Զաքամ երթևեկող գուլխաբօրները՝ լսելով այնտեղի կայարանի ծառայողներից, մեզ պատմեցին: Կռւից առաջ Թուրքերը (որ ժողոված են եղել Զաքամում) յայտնել են՝ պարծենալով, նոյն ծառայողներին, թէ «շուտով Զարդախլուի կարողութիւնները կը բերենք»:

Այդ ինչ հրեշաւոր լօգիկա է։ Միթէ երբ ես ասում եմ, պարոններ, դուք մեղադրում էք ինձ գողութեան մէջ բայց ես գող չեմ, միթէ դա նշանակում է, որ ես ասում եմ թէ դուք այս ինչն էք։ Ոչ, ես միայն հաստատում եմ այն փաստը, որ ես գող չեմ։

*

Համագումարը յարձակման է ենթարկվում և «Ցառայ» լրագրի կողմից (№ 42)։ Հայ պատգամաւորները արժանացել են «երեկլիներ» և «հայ ժողովրդի ներկայացուցչութեան տաղտուկ մօնօպօլիստներ» էպիտետներին և Դաշնակցութիւն կազմակերպութեան առջև ծառայութիւն մատուցանողներ։ Արդեօք եթէ լինէին ուրիշ անձինք, նրանք նոյնպէս «երեկլինե՞ր»կը լինէին և տաղտուկ մօնօպօլիստներ»․ ինչ վերաբերում է Դաշնակցութեան առիթով արտասանած ճառերին, պէտք է նկատենք «Ցառային», որ տեղական մամուլի օրգաններից ոչ մէկը այնքան պաթոսով և աղմուկով, in extenso, չը տպեց պ. Ա. Խատիսեանի ճառը, ոչ ոք այնքան չը պարծեցաւ այդ ճառի ճիշտ նկարագրութեամբ, ինչպէս «Ցառայը»․ Ինչու այդ ժամանակ «Ցառայը» չը յայտարարեց իր անհամերաշխութիւնը այդ ճառի հետ։

*

Ռուս մամուլը բոլորովին այլ տեսակ վերաբերմունք է ցոյց տալիս համագումարին։ «Нов. Обозр.» լրագիրը (№ 36) հիացած է համագումարի գործնական կողմով։ Նա, ի հարկէ, չէ կարող գուշակել, որ համագումարի որոշումները կը խաղաղացնեն հայերին և թուրքերին, ինչպէս չէ կարող գուշակել և ոչ ոք մեզանից, բայց նա գտնում է, որ համագումարը փայլուն կերպով երևան հանեց, որ մարդիկ, որոնք մեր պետականութեան պայմանների պատճառով չեն անցել ոչ քաղաքական, ոչ հասարակական կեանքի ոչ մի դըպրոց, որքան հասունութիւն, որքան իմացականութիւն, տաղանդ, բարեխղճամտութիւն, զգուշաւորութիւն և տակտ ցոյց տուին։

Հայ պատգամաւորները կատարեցին իրանց քաղաքացիական և հասարակական պարտաւորութիւնը, պաշտպանելով ժողովրդի շահերը այնպէս, ինչպէս թելադրում էր իրանց խիղճը, հասկացողութիւնը, առանց պէտք զգալու վարվել այս և այն ներշնչման և կողմնակի թելադրութեան համաձայն, ի նկատի ունենալով միայն ժողովրդի շահերը։

*

«Новое Время» լրագիրը վերջերս սկսել է նորից զբաղվել հայերով։ Փետրվարի 27-ի համարում տպված է պ. Բ. Վէրմիշեանի մի նամակը—Կովկասեան դրաման և «հայ ինտրիգան Կովկասում» վերնագրով, որի մէջ նամակագիրը աշխատում է ապացուցանել գրեթէ նոյն մտքերը և թէզիսները, ինչ որ աշխատում էին ապացուցանել հայ պատգամաւորները համագումարի մէջ։ Եւ որ արժանի է ուշադրութեան, այդ այն է, որ տպելով պ. Վէրմիշեանի յօդուածը, ռուս լրագիրը ոչ մի նկատողութիւն կամ հերքումն չէ անում իր կողմից, ինչպէս անում էր առաջ։

Առանձին ուշադրութեան արժանի է Մէնշիկովի յօդուածը նոյն լրագրի փետրվարի 28-ի համարում, «Ծագող կիսալուսինը» վերնագրով։ Մէնշիկովի մօտ է գնացել մի հայ, զինաւորված գլխից մինչև ոտքը, բայց ոչ զէնքերով, այլ գրքերով, յիշատակագրերով, տեղեկութիւններով, աշխարհագրական քարտէսներով, փաստերով և թւանշաններով, որոնք համոզել են այդ նշանաւոր հրապարակախօսին փոխել իր կարծիքը հայերի մասին։ Այդ յօդուածը դեռ չէ վերջացած, ուստի և մենք կը ծանօթացնենք նրա բովանդակութեան հետ յաջորդ անգամ, մեր կարծիքի հետ միասին։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Շտապում եմ հաղորդելու ընթերցող հասարակութեանը մի վերին աստիճանի ուրախ և համակրելի լուր։ Այսօր հաստատ աղբիւրից իմացանք, որ Վեհափառ Կաթողիկոսի հրամանի համաձայն, բոլոր թեմական դպրոցներում, նաև ճեմարանում պէտք է դասաւանդութիւնները վերջացնեն սովորականից շատ շուտ, որից յետոյ պէտք է լինի Էջմիածնում ընդհանուր ուսումնական ժողով, որ պէտք է մշակէ ընդհանուր հայ դպրոցների համար մի բոլորովին նոր կանոնադրութիւն և ծրագիր։ Այդ բազմամարդ ժողովին մասնակցելու են և առանձնապէս հրաւիրվելու են Վեհափառի կողմից Էջմիածին բանիմաց հոգևորականներ, դպրոցական անցեալ ունեցողներ, մամուլի ներկայացուցիչներ, Էջմիածնի միաբանութիւնից, ճեմարանի, թեմական և ծխական դպրոցների ուսուցչական ներկայացուցիչներ, թեմական և դպրոցների հոգաբարձութեան ներկայացուցիչներ, իւրաքանչիւր քաղաքից ընտրովի 3—5 հոգի պատուաւոր և բանիմաց քաղաքացիներ և Թիֆլիսի ուսումնարանական յանձնաժողովի անդամները, որոնք պէտք է ներկայացնեն ժողովին ճեմարանի, թեմական և ծխական դպրոցների համար իրանց կազմած ծրագիրները և կանոնադրութիւնները։ Նաև Նորին Օծութեան կողմից հրաւիրվելու են առանձնապէս մարդիկ։

Ժողովը կայանալու է ուղիղ մայիսի մէկին Վեհարանի դահլիճում, որին նախագահելու է ինքը Վեհափառ Կաթողիկոսը։ Այս ընդհանուր ժողովին մասնակցողներին հիւրընկալելու համար պատրաստում են ամբողջ ճեմարանի շինութիւնը։ Վերոգրեալ կարևոր հարցի համար ամսիս 2-ին, հինգշաբթի օրը Էջմիածնում, Վեհի հրամանով տեղի է ունեցել միաբանական ժողով, որտեղ որոշվել է այս կարևոր ընդհանուր ժողովի գումարման անհրաժեշտութիւնը։

Ողջունում ենք մեր դպրոցների մատաղ սերունդին, որ վերջապէս նա կունենայ մի որոշ կանոն ու ծրագիր, որով կառաջնորդվի և չի ենթարկվի այս կամ այն նշանակովի տեսուչների քմահաճոյքին։

Միաբանական այդ ժողովում խօսվում է նաև, որ պէտք է Էջմիածինը ևս օգնէ հայ-թուրքական ընդհարումներից անտեսապէս քայքայված հայ ժողովրդին։ Ժողովը միաձայն վճռել է, Էջմիածնապատկան գումարը ստանալուն պէս, 10—25000 րուբլի նուիրել այդ նպատակով։ Շնորհակալութիւն ձեզնից հոգևոր հայրեր, որ վերջապէս հազիւ հայ մտածեցիք հայ տառապեալներին և ասացիք. «Եւ քոյդ ի քոյոց քեզ մատուցանեմ»։

Գ. Աղազադեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Մարտի 6-ին Երևանի նահանգական դատարանում, երկու սահմանապահ զինուոր վկայի ներկայութեամբ, քննվում էր հայ հայդուկների գործը, որոնք, 1904 թ-ին յուլիսի 12-ին, Միհրան Փէշիշեանի առաջնորդութեամբ անցան թուրքաց սահմանը և աւերեցին այնտեղ թուրքական մի զօրանոց։

Դատարանին նախագահում էր Դօբրօվլյանսկի, անդամներն էին՝ Սմոլցովսկի և Շտանգէ, մեղադրում էր դատախազի օգնական Նիկոլայ Մատվէյէվիչ Ժոժեր։ Մեղադրվողները 29 հոգի էին. նրանց պաշտպանում էին հրաշալի փաստաբան Օսկար Գրուզէնբերգ (Պետերբուրգից) և Իսահակ Մելիք-Ադամալեանց։ Դատավարութիւնը կատարվում էր դռնբաց։

Դատարանը այդ արշաւանքի մասին պարզեց հետևեալը. 1904 թւին յուլիսի 12-ի սկզբներում, Միհրան Փէշիշեանը՝ մի խմբով անցաւ ռուսաց սահմանը գնալու դէպի Սասուն իր կռուող եղբայրներին օգնելու նպատակով։ Սահմանագլխի Մօսուն գիւղի մօտ, նրանք հանդիպում են տաճկաց գիշերապահ զինուորներին ու արիւնահեղ կռւի են բռնվում թէ նրանց և թէ օգնութեան հասնող, Զօրի ու շրջակայ վրանաբնակ քրդերի դէմ։ Կռիւը քանի գնում սաստկանում է. որովհետև մօտակայ զօրանոցներից և համիդիէ հեծելազնդերից օգնական խմբեր են տեղ հասնում, անհամեմատ Բնական մեծ ուժի առաջ, խումբը ստիպված է լինում յետ նահանջել, աչքի առաջ ունենալով անհաւասար կռիւը մէկ կողմից, իսկ միւս կողմից շրջակայ հայ գիւղերի փրկութեան մեծ գործը, որոնց ժողովուրդը երկարատև կատաղի կռւի ընթացքում, անդէն ապաւինել էր նրանց պաշտպանութեան։ Խումբը իր հովանաւորութեան տակ առնելով ժողովրդին, մեծ կորուստների գնով վերջապէս յաջողում է ժողովրդին միջոց տալ հասնելու ռուսական սահմանը, իսկ հայդուկային խումբը, սահմանի մերձակայ բարձունքներում դիրքեր գրաւելով շարունակում է կռիւը, մինչև որ մութը պատում է։ Թշնամին արդէն յետ էր նահանջել, և հայդուկների մնացորդ խումբը դիմեց դէպի հարևան քրիստոնեայ ռուսաց պետութեան հողը։ Նրանք, երկար տարածութիւն անցնելով, առաւօտեան հասան ռուսաց սահմանապահների զօրանոցից 500 քայլի վրա գտնվող մի աւերակի ու կանգ առան այդտեղ հանգստանալու, որովհետև սաստիկ ուժասպառ էին եղել։ Մօտիկ տարածութեան վրա նրանք նկատում են մի սահմանապահ զինուորի, և կանչում են իրանց մօտ. հէնց այդ միջոցին էլ տասը կօզակներ շրջապատում են խմբին և տանում դէպի զօրանոցը։

Ահա այդ օրից սկսած՝ նրանք, տառապող ժողովրդի անբաղդ զաւակները հեծում են Երևանի բանտում, քայքայելով իրանց առողջութիւնը։ Կալանաւորութիւնից երեք ամիս յետոյ, խմբի մի մասը, որոնք ռուսահպատակներ էին, ազատվում են բանտից 300 րուբլի երաշխաւորութեամբ, իսկ միւս մասը՝ թուրքահպատակները, աղերսագիր են ներկայացնում կովկասեան Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովին երաշխաւորութեամբ բանտից ազատելու համար։ Փոխարքան յարգում է այդ խնդիրը և անցեալ տարի նոյեմբերի 19-ին, պ. Իսահակ Մելիք-Ադամալեանի երաշխաւորութեամբ, ազատվում են բանտից։

Դատարանը ամսիս 6-ին քննելով ահա այդ գործը, միաձայնութեամբ արդար ճանաչեց մեղադրվողներին։ Դատաստանական դահլիճում լցված հասարակութիւնը որոտալից ծափերով ընդունեց հայ հայդուկների արդարացման համար դատարանի տուած արդար վճիռը։

Գ. Տ.

Երևան

Ի ՆՊԱՍՏ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ

II

Խօսեցին միւս հռետորները։

Սուեթվարկի եպիսկոպոսը ակնարկում է սրտալիր համաձայնութեան մասին և ցանկութիւն յայտնում, որ Ջէյմս Բրայս, այժմ Բաններմանի նոր կաբինէտի անդամ, ազդէ իր ընկերակիցների վրա, որպէս զի նրանք շարունակեն Լորդ Լանսդօունի, նախկին արտաքին գործերի մինիստրի սկսած գործը։ Պ. Բրայսը՝ իր անցեալով, այդ դատի ամենաջերմ պաշտպաններից մէկն է և նա պէտք է իր ահագին ազդեցութիւնը գործ դնէ իրագործելու այն գաղափարները, որ դաւանում էր հասարակ քաղաքացի եղած ժամանակ, այսինքն աշխատէ ստանալ հայկական և մակեդօնական նահանգների համար Լիբանանի ռեժիմը։

Մենք, աւելացրեց եպիսկոպոսը, վարիչ շրջաններին չենք պատկանում, հետևաբար աւելի ազատ ենք արտայայտելու մեր զայրոյթը Թիւրքիայում գործվող ոճիրների դէմ և պահանջելու այսուհետև նրանց շարունակութեան անհնարինութիւնը։

Դօկտ. Ռէյնօլդս, որ ամբողջ երեսուն տարի ապրել է Հայաստանում, և որը քիչ էր մնացել, որ զոհ գնար քիւրդական բարբարոսութիւններին, իբրև երկրին խորապէս ծանօթ, ողբալի մանրամասնութիւններ հաղորդեց Վանի և շրջակայքի ներկայ սարսափելի դրութեան մասին։ Ինչ որ մնացել է կոտորածներից, բնաջինջ է լինում սովի և թշուառութեան շնորհիւ։

Պ. Բիյար յիշեցնում է, որ տասնութ տարի առաջ մի և նոյն սրահում տեղի էր ունեցել մի նմանօրինակ ժողով մի և նոյն նպատակով։ Բայց այդ ժողովը անցել է մինչև այժմ ապարդիւն և դրանում մեղաւոր ու պատասխանատու են ոչ միայն սուլթանը և եւրոպական կառավարութիւնները, այլ և քաղաքացիները այն ազատ երկրների, ինչպէս Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, որոնք չեն ազդում իրանց կառավարութիւնների վրա հարկ եղած կերպով։

Մենք մեղաւոր ենք դէպի հայերը մի այլ տեսակէտով. մենք նրանց տուել ենք մեր կուլտուրայի ճաշակը, ազատութեան և արդարութեան գաղափարները. պրօֆեսոր կ. Պօլսի հայկական դպրոցներում, պ. Պիէր Բիյարը սովորել է այնտեղ սիրել այդ՝ կուլտուրայի և քաղաքակրթութեան ծարաւի ժողովուրդին, որը տառապում է մանաւանդ նրա համար, որ շատ լաւ է իւրացրել արդարութեան, ազատութեան և քաղաքակրթութեան մեր դասերը։ Պէտք է վախենալ, որ Եւրոպայի անտարբերութեան պատճառով նա իր բարոյական քաջութիւնը չը կորցնէ և չը վհատվէ։ Մենք աւելի քան երբէք պարտական ենք նրան տանել յոյսը, փրկարար յոյսը և աշխատել նրան ազատելու իր նահատակութիւնից, ինչ ձևով էլ որ լինի։

Կանոնիկոս Մակ-Կօլ ծանրանում է թիւրքական աստուածպետութեան, թէօկրատիայի, վտանգների վրա։ Նա ցաւ է յայտնում, որ պետութիւնների կապոյտ կամ դեղին դիպլօմատիական գրքոյկները շատ սահմանափակ տեղեկութիւններ են հաղորդում և հիւպատոսական բոլոր տեղեկագրերին լայն հրապարակայնութիւն չեն տալիս։ Այդ տեղեկագրերը ցոյց պէտք է տային, որ դօկտ. Ռէյնօլդսի նկարագրած պատկերը չափազանց ճիշտ է դժբաղդաբար, և հայերը գտնվում են կրիտիկական դրութեան մէջ։

Պ. Նօէլ Բուքստոն ցանկութիւն յայտնեց, որ Գլադստոնի մտածմունքի համաձայն, Արևմուտքի պետութիւնները շաղկապված լինէին միմեանց հետ աւելի ուժգին ու սերտ համերաշխութեամբ, որպէս զի ոչ թէ տապալէին օսմանեան կայսրութիւնը, այլ նրան դնէին կարգի ու կանոնի մէջ, որպէս զի Սուլթանի կառավարութիւնը փոխանակ դահիճ լինելու իր ժողովուրդների համար, լինէր այն՝ ինչ են բոլոր քաղաքակիրթ պետութիւնները։ Հետևաբար պէտք է ձգտել դրա համար, որ պետութիւնները աւելի ազդու կերպով ներգործեն Բ. Դրան վրա։ Իսկ ինչ վերաբերում է անգլիական պարլամենտին, նորընտիր պատգամաւորներից 126-ը յանձն են առել արդէն պաշտպանելու Թիւրքիայի ռէֆօրմների ծրագիրը։

Ագար-Բէտ գտնում է, որ Ռուսաստանի և Աւստրօ-Ունգարիայի ներքին դրութիւնը աւելի հեշտ է դարձնում Արևմուտքի պետութիւնների, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միահամուռ ներգործութիւնը Թիւրքիայի վրա։

Պ. Մուր պատկերացնում է մակեդօնական վիլայէթների միշտ ողբալի դրութիւնը, ինչպէս և այն սարսափելի կացութիւնը, որի մէջ գտնվում է Ադրիանուպոլսի քրիստոնեայ ազգաբնակութիւնը։

Ժողովը այնուհետև ընդունում է հետևեալ որոշումը, միաձայն։

Կոնֆերանսը արտայայտում է իր խորին վիշտը, որ հակառակ Բերլինի 1878 թ. դաշնագրի 23-րդ և 61-րդ յօդուածների, ստորագիր պետութիւնները մինչև այժմ անկարող են գտնվել ձեռք առնելու ազդեցիկ միջոցներ օսմանեան կայսրութեան եւրոպական և ասիական վիլայէթների մէջ մտցնելու ընդունված ռէֆօրմները և ամենաբուռն եռանդով պահանջում է այդ պետութիւններից և Ամերիկայի Միացեալ Նահանգներից ձեռնարկելու մի ծրագիր, որի գործադրութիւնը կարելի լինի հարկադրել Սուլթանին և որը ստեղծէ մի արդար և մարդկային կառավարութիւն թիւրքական իւրաքանչիւր նահանգի համար։

Այնուհետև պ. Յակոբեան շնորհակալութիւն է յայտնում նախագահին և յիշեցնում, որ ահա 30 տարի է ինչ, հայերը առաջին անգամ մի յիշատակագրով դիմել են պետութիւններին և նրանց ուշադրութիւնը հրաւիրել իրենց դժբաղդ կացութեան վրա, բայց փոխանակ այդ տասնեակ տարիների ընթացքում, իրանց նահատակութեան վերջ դրվելու, ընդհակառակն ենթարկվել են աւելի զարհուրելի հալածանքների, աշխարհասասան ջարդերի։ Եւ վերջացնում է յուզիչ կոչով Ֆրանսիային ու Անգլիային։

Նախագահը դարձեալ խօսք առնելով պատասխանում է, որ ինքը և իր զինակիցները կատարում են մի միայն իրանց մարդկային պարտականութիւնը։ Չէ կարելի ասել որ երեսուն տարվայ ընթացքում գործ դրված ջանքերը բոլորովին ապարդիւն են անցել։ Պէտք չէ վհատութեան և սարսափանքի անձնատուր լինել։ Հարցը այնքան էլ հեշտ լուծվողներից չէ, բայց Եւրոպան հետզհետէ կարող է դառնում լուծելու նրան, որովհետև հետզհետէ բազմանում է այն մարդկանց թիւը, որոնք պատրաստ են իրանց կեանքը զոհել մարդկային համերաշխութեան համար։ Յիշեցէք թէ ինչ կարող է անել նոյն իսկ մի հատիկ մարդ, Գլադստոնը, և նրա հիանալի կռիւը թիւրք բռնապետութեան դէմ բօլգարական վայրագութիւնների ժամանակ։ Անկասկած ինչ որ կատարվել է, բոլորովին անբաւական է։ Բայց փոքր առ փոքր պայծառանում է հօրիզօնը։ Ահաւասիկ Բերթլօ, որ խօսում է ինչպէս Գլադստոնը և նրան հետևում են ուրիշ վեհանձն անձինք, որոնք շարունակում են նոյն կռիւը, նոյնքան եռանդով։ Եւ այսպէս հետզհետէ զարթնում է ժողովուրդների գիտակցութիւնը։

Կոնֆերանսից յետոյ երեկոյեան տեղի է ունենում ընթրիքը, որին ներկայ են լինում բազմաթիւ հրաւիրեալներ։

Ընթրիքը կազմակերպված էր ի պատիւ Ջէյմս Բրայսի։ Նախագահում էր Ֆ. Ս. Ստեվէնսոն, անգլօ-հայկական ընկերութեան նախագահը։ Խմեցին նախ անգլիական թագաւորի և յետոյ Հանրապետութեան նախագահի կենացը, որին յաջորդեցին մի շարք կենացներ։

Դ-Էստուրնել դը Կօնստան վերջապէս առաջարկեց խմել Ջէյմս Բրայսի կենացը, և իր ներբողականի մէջ ասաց, որ Իրլանդական գործերի մինիստրը մարմնաւորում էր, աշխարհում, արդարութեան ոգին, իր տաղանդով ու իր նկարագրով, իր գրուածքներով ու իր գործերով։ Այն ծառայութիւնները, որ այսօր կարող է մատուցանել անգլիական լիբերալիզմը, կրկնապատկված են ֆրանսիական լիբերալիզմի հետ կնքած համաձայնութեամբ։ Ինչ որ էլ լինեն ապագայի կնճիռները, այդ միութիւնը, համաձայնութիւնը չեն կարող վտանգուած լինել. Նա պիտի պարտադրէ իր առատ ու թանկագին պտուղները, որովհետև համապատասխանում է երկու ժողովուրդների կարիքներին և համակրութիւններին։ Մինիստրութիւնների փոփոխութիւնները չեն կարող ազդել այդ միութեան վրա, որովհետև երկու երկրների ամբողջ ազգաբնակութիւնը յարած է այդ համերաշխութեան։ Իսկ Ջէյմս Բրայսի նման մարդիկը այդ միութիւնը աւելի բեղմնաւոր պիտի դարձնեն յօգուտ արդարութեան և մարդկութեան։

Պ. Լուիջի Վիլլարի և Կանոնիկոս Մակ-Կօլ խօսեցին նոյն թեմայի վրա։

Ջէյմս Բրայս խորապէս զգացված՝ ի պատիւ իրան կատարված այդ սրտագին ցոյցից, շնորհակալութիւն յայտնեց և ասաց, որ նա ամբողջապէս հաւատարիմ է մնում այն գաղափարներին ու վարդապետութիւններին, որոնց նա պաշտպան էր կանգնած նախ քան մինիստրութեան պորտֆէօյլն ընդունելը։

Եթէ կարելի էր ցաւել, շարունակեց նա, քաղաքական ամուլ պայքարներին յատկացրված ժամանակի համար, ընդհակառակը չը պէտք է ցաւել երբէք արդար դատերի համար նուիրված ժամանակի համար։

Ահա քսան և վեց տարի է ինչ, նա շահագրգռվել է առաջին անգամ Արևելքի հարցով, Սև ծովի եզերքներում կատարած մի ճամբորդութիւնից յետոյ։

Այդ ժամանակից ի վեր, նա ցաւով խոստովանվում է, որ իրան չէ աջողվել անել աւելին. Նա կարողացել է միայն իր անգլիացի բարեկամների մտքի մէջ վառ պահել Արևելքի տանջված ժողովուրդների յուսահատ դրութեան պատկերը և յիշեցնել Մեծ-Բրիտանիային, որ նա պարտաւոր է օգնութեան հասնել և վերջ դնել նրանց տառապանքներին։

Նրա յիշողութեան մէջ անջնջելի են մնում 1848—1849 տարիները, նշանաւոր տարիներ, ուր Եւրոպայի ժողովուրդները վեր էին կենում իրանց միապետների դէմ, և ուր մի րօպէ այնպէս թւաց, թէ ամբողջ Եւրոպան պէտք է վերակազմվէր ազգայնութիւնների և ներկայացուցչական կառավարութեան սկզբունքի վրա։ Կօշուտի և Մացցինիի անունները մարմնացնում էին այդ տենչանքները, ձգտումները։

Իտալիան և Ունգարիան տիրանում էին իրանց ազատութեան, Ֆրանսիան դառնում էր Հանրապետութիւն, Գերմանիան գլուխ էր բերում իր ազգայնական միութիւնը։

Յետոյ մտածումը նրանց, որոնք ցանկանում էին մի բան անել ազատութեան համար, թռաւ դէպի Արևելք և, 1876-ից յետոյ նրանց հայեացքը սևեռվեց Բօլգարիայի և Հայաստանի, Մակեդօնիայի և Կրետէի, Թեսալիայի և Մօնտենեգրօյի վրա։ Աւելի դժուար էր շահագրգռել հասարակական կարծիքը այդ երկրներով, թէպէտև նրանց տանջանքները աւելի սարսափելի էին, կացութիւնը՝ աւելի յուսահատ, քան Իտալիայինը և Ունգարիայինը։

Արևելքի գործիչները իրանց խաղաղ ու բարգաւաճ կեանքում, երբեմն երբեմն լսում էին Արևելքի նահատակների ճիչերը և իրանց պարտականութիւնն էին համարում Անգլիային հրաւիրել իր պատասխանատուութեան ճանաչումին։

Դժբաղդաբար դժուար էր մի անգամ կատարված չարիքը դարմանել և Անգլիան ծանր էր գտնում խոյս տալ հետևանքներից այն չարիքի, որ նա պատճառել էր այդ ժողովուրդներին և որը երկարաձգում էր նրանց տանջանքը։ «Թող չենթադրեն բնաւ, որ ինչ ցանկանում ենք անել Արևելքի ժողովուրդների համար, պարունակում է որ և է վատ բան մահմեդականների համար։ Մենք ձգտում ենք որքան քրիստոնեաների, նոյնքան մահմեդականների բարիքին։ Բայց չը պէտք է կարծել, որ մենք ձգտում ենք ջնջել ճնշումը և վերացնել անարդարութիւնը ու անգթութիւնը ամեն տեղ, ուր նրանց պատահում ենք։ Մենք այդքան խոշոր յաւակնութիւններ չունենք։ Մեր կարողութիւնը աւելի սահմանափակ է։ Մենք գիտենք, որ մեր երկրում դժուար պարտականութիւններ ունենք կատարելու։ Գիտենք, որ պարտական ենք բարելաւելու մեր տառապող մասսաների դրութիւնը։ Գիտենք, որ չենք կարող անել այն բոլորը՝ ինչ որ ցանկալի է անել։ Բայց կարծում ենք, որ այնուամենայնիւ կարող ենք շատ բան անել և պարտաւոր ենք անել հնարաւորը, գրաւելու համար աշխարհում համակրութիւններ»—ոգևորված ասաց պատուաւոր մինիստրը։

Պէտք չէ ունենալ մի մեծ ազգի պարտականութեան մասին այնքան անմիտ գաղափար և ենթադրել, որ նա պարտաւոր է պաշտպանել միմիայն իր սեփական շահերը։

Մի մեծ ազգի կառավարութիւնը այսպիսի հարցերում չը պէտք է աւելի առաջ ընթանայ, քան հասարակական կարծիքը, բայց երբ ազգը կամեցաւ, կառավարութիւնը կարող է գործ դնել իր ազդեցութիւնը յօգուտ մարդկութեան և արդարութեան։ Անգլիական, ֆրանսիական և իտալական ազգերը ցանկանում են, ինչպէս թւում է, հետևել այդ ուղուն։

Անկասկած, մի քանի տարուց ի վեր, հակառակ ցուցմունքներ չեն եղել։ Այս կէտում անգլիական պարլամենտի երկու կուսակցութիւնները միմիանց համաձայն էին և ով ճանաչում է մեր ժողովրդի չափաւորութիւնը, գիտէ որ նա պատրաստ է պաշտպանելու կառավարութիւնը այն բոլոր գործունէութիւնների մէջ, որոնց նպատակն է բարելաւել Արևելքի ճնշված ժողովուրդների դրութիւնը։

Մի մեծ ազգ աշխարհում ունեցած իր իշխանութիւնն ու ազդեցութիւնը, ինչպէս և իր վայելած ազատութիւնը չպէտք է նկատէ որպէս շահի գործիք միայն իրա համար, այլ որպէս աւանդ՝ դրված իր ձեռքերում, յօգուտ մարդկութեան։ Նա պէտք է գործ դնէ մանաւանդ այդ բոլորը ի նպաստ Արևելքի թշուառ ժողովուրդների։ Այդ երկրները կազմակերպելու համար երկու ձև միայն կայ։ Կամ պէտք է որ նրանց գրաւէ և հովանաւորէ եւրոպական մեծ պետութիւններից մէկը և կամ պէտք է որ նրանք զարգանան ներքնապէս և դառնան ազատ ազգերի բնակավայր։

Անկասկած ամենքը ցանկանում են, որ այդ բարեբեր և ծաղկած երկիրները մնան տեղական ժողովուրդների ձեռքում, որոնք ցոյց են տուել արդէն, իրանց պրօգրեսիվ կուլտուրայով և իրանց աւանդական հաւատքը պահպանելու հաստատակամութեամբ, որ կարող են շնորհիւ իրանց կենսունակութեան և գիտակցութեան մի ոյժ կազմել աշխարհում։

Այդքան դժբաղդ դարերից յետոյ, մի բաղդաւոր լուծում—պատիւ ու փառք կը հիւսէին անգլիական, իտալական և ֆրանսիական ազատ ժողովուրդների համար, եթէ նրանք միասին նուիրվէին Արևելքի ժողովուրդների ազատագրութեան գործին։

Բուռն ծափահարութիւններ ողջունեցին այդ վեհանձն խօսքերը։

Ուրիշ հռետորներ մաղթեցին, որ «աջողութեամբ պսակվի ազատութեան և արդարութեան դատը»։

Ա. Չօպանեան Վարդանանց հերոսական կռւի տարեդարձի յիշատակը կոչելով, փառաբանեց իր ազգի կենսունակութիւնը, որ միշտ նահատակվել է քաղաքակրթութեան պաշտպանութեան համար։

Պ. Նօէլ Բուքստոն ողջունեց օտար հիւրերին և պ. Իսկէնդէր նրան պատասխանեց նորից հաստատելով հայկական յոյսերը։

Զ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՔՍԱՆՀԻՆԳԱՄԵԱԿ

1881 մարտի 8—1906 մարտի 8

Պատմական «Былое» նոր ամսագրում զետեղված է 1881 թւի մարտի 8-ի պետական Խորհրդի նշանաւոր նիստի նկարագրութիւնը, երբ քննվում էր կոմս Լօրիս-Մելիքօվի ներկայացուցչական կառավարութեան նախագիծը։ Ահա լրացաւ այդ նշանաւոր օրվայ 25-ամեակը։

Օգտվելով առիթից, թարգմանաբար առաջ եմ բերում «Մշակի» էջերում այդ պատմական ժողովի նկարագրութիւնը, որը զուրկ չէ ներկայումս օրվայ հարցի հետաքրքրութիւնից։

Առաջինը խօսեց Միլիւտինը.

«Հանգուցեալ կայսրը,—ասաց նա,—գահ նստելուց անմիջապէս ձեռնարկեց մի շարք մեծ գործերի։ Նրա սկսած բարեփոխութիւնները պիտի հիմնաւորապէս նորոգէին մեր հայրենիքի ամբողջ կազմը։ Դժբաղդաբար Կարակօզովի հարուածը վերջ տուեց ընդարձակամիտ միապետի մի շարք նախագծերի իրագործմանը։ Գիւղացիների ազատելու գործից դատ, որին հանգուցեալ կայսրը նուիրված էր իր ամբողջ հոգով՝ բոլոր մնացած բարեփոխութիւնները իրագործվում էին, դանդաղա-

---

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

(Վերջ)

Ամփոփենք։ Ծայրէ ծայր սև, արտասուելի մի իրականութիւն, ուր բոլոր ձախորդ, հակահասարակական, հակապրօգրէսիվ գործօնները ձեռք ձեռքի տուած, չինական պատնէշ են ուզում բարձրացնել իրանց և դրսի աշխարհի միջև. մի մռայլ, անապատական միակերպութիւն, որի անեզր ու խաւար ֆօնի վրա չեն երևում լուսաւոր, յուսատու, կազդուրիչ կէտեր. մի արատաւոր, պաթօլօգիական հոգեբանութիւն, որի հիմքերը ամուր խարսխված են դարերի գիշերի մէջ և որը բուժելու համար՝ անհրաժեշտ է երկար, անվերջ, քրտնաջան աշխատանք, մի յատուկ ու գերազանց բժշկականութիւն։ Հարկաւոր է ուժեղ, կործանարար մի հողմ, որ փոթորկէ, տակն ու վրա անէ հսկայական ճահիճը, թարմացնէ մթնոլորտը և հարթէ ազատ ու արգասաւոր դաշտը՝ նոր կեանքի բողբոջների համար։

Ո՞վ պիտի կատարէ այդ կարդինալ յեղափոխութիւնը…։

Մեզ մեղադրում են—պանիսլամիզմի ու սօցիալ-դէմօկրատիզմի կովկասեան իդէօլօգները —որ մենք, «հայ նացիօնալիստներս» միայն հայ ժողովրդի մասին ենք մտածել և չենք զբաղվել նաև հարևան թուրքերի կրթութեամբ ու դաստիարակութեամբ…

Ահա մի օրիգինալ պահանջ ևս։ Նորընծայական խիզախութիւնը քաղաքագիտութեան հովեր է առնում և յաղթանակօրէն հասկացնում է մեզ, որ սրանից տասնեակ տարիներ առաջ մենք պիտի նախատեսէինք փոթորիկը և պիտի մտածէինք նրա առաջն առնել… Թուրք ժողովուրդը դաստիարակելով։

Բաւական չէր հայ ինտելիգենցիայի առաջ դրված սիզիֆեան գործը, կովկասահայ և նոյն իսկ պարսկահայ առաջադիմութեան խնդիրը, տաճկահայերի արիւնոտ դատը՝ կապված հազարաւոր մտահոգութիւնների ու գերմարդկային ճիգերի հետ, բաւական չէ, որ հայ գործօն երիտասարդութեանը բաժին է ընկել՝ պատմութեան մի չարաչուք անօրէնութեամբ՝ ամենատառապալի և ամենապերախտ աշխատանքը—գործել մի դժոխային միջավայրում, առանց գործելու մի ազատ կայանի, շրջապատված ամեն կողմից մարդակեր ցեղերով ու պետութիւններով, հալածված և Տաճկաստանում, և Պարսկաստանում, և Ռուսաստանում, հալածված յաճախ նոյն իսկ հարազատներից, երբեք չը վարձատրված հայ ժողովրդական դասի պաշտօնական «հովանաւորներից» բաւական չէ այդ անօրինակ, պատմութեան մէջ չը տեսնված մաքառումը՝ մենք մի չնչին փոքրամասնութիւն, պիտի ստանձնէինք և Թուրք ժողովուրդը լուսաւորելու գործը… Չէ, այդ պահանջը ևս լրջութիւն չունի, ինչպէս միւս բոլոր պահանջները, նոյն աղբիւրներից բղխող։ Հային երբեք չեն թոյլ տուել ազատ շունչ քաշել իր հայրենիքում, իր ճակատագրի մասին իսկ հոգալ շատ թէ քիչ ազատօրէն, նրա դըպրոցներն են փակել, հասարակական հիմնարկութիւններն են անդամալուծել, նրա ամբողջ ազգային գոյութիւնն են ոտի տակ տուել, մահվան դատապարտել—նրան թոյլ տուել են ուրիշի մասին մտածել, հոգալ…

Բայց եթէ անգամ թոյլ էլ տային՝ պիտի կարողանա՞ր նա իր սեփական նախաձեռնութեամբ, իր ուժերով որ և է էական փոփոխութիւն մտցնել մի ժողովրդի կեանքում, որ միանգամայն տարբեր, բացառիկ է իր մտաւոր, հոգեկան ու բարոյական կենցաղով, իր սօցիալական բովանդակ կազմով, որի խարիսխները ընդհանուր գծերով ցոյց տուինք արդէն։ Երանի չէր, թէ այդպէս լինէր… Իսկ մենք կարծում ենք, որ դա ուտօպիստական, լաւատես մի հայեացք է.—Թուրքի կեանքը վերջ ի վերջոյ նա ինքը պիտի փոփոխէ ու բարւոքէ proprio motu, և ոչ հայերը, ոչ իսկ, ի հարկէ, կովկասեան սօցիալ-դէմօկրատները, որքան էլ նրանք ջերմ պաշտպան կանգնեն Թուրք պրօլետարիատին, որքան էլ սրտանց փափաքեն թուրքական վերածնութեան գործին։

Փոխադարձ օգնութեան սկզբունքը խիստ յարգելի է—տարակոյս չը կայ։ Կուլտուրական հարևանների, մանաւորապէս մօտիկ շփվող հայ ինտելիգենցիայի պարտականութիւնն է՝ հնարաւորութեան—թէկուզ և շատ անձուկ—սահմաններում զարկ տալ մտքերի փրկարար խմորումին՝ մեր մահմեդական դրացիների մէջ։ Թուրք պրօլետարիատին՝ որ այսպէս թէ այնպէս, նորագոյն ինդուստրիալիզմի յորձանքն ընկնելով, կամաց-կամաց շփվում է միւս, աւելի քաղաքակիրթ ազգերի պատկանող պրօլետարիատների հետ՝ պէտք է, անշուշտ, աշխատել քարշել նաև դէպի գիտակցական վերաբերմունքը։ Աղէտների սկզբնաւորութիւնից ի վեր՝ մեր հրատարակած այլ և այլ թռուցիկները պարզ վկայում են համերաշխութեան այն զգացման մասին, որով նրանք տոգորված են Թուրք աշխատաւոր ժողովրդի նկատմամբ։

Բայց մենք դարձեալ սխալ, ուտօպիական ենք համարում՝ լաւատես յայտարարութիւնները այն կուսակցութիւնների, որոնք դիտում են Թուրք պրօլետարիատին, իբրև մի տեսակ փրկութեան խարիսխ, որը ոչ միայն պիտի ազատէ մեզ ջարդերի ու աւերումների մըղձաւանջից, այլ և առհասարակ «տակից» պիտի յեղաշրջէ, վերածնեցնէ հարազատ ժողովուրդը։

Ամեն մի պրօլետարիատ, իբրև իր ազգի մի հատուածը, բաժանում է այդ ազգի ժառանգականութիւնը, ատավիզմը։ Սօցիալիստական գաղափարը, որքան էլ ինքնին հրապուրիչ ու մեծագործ լինի, չէ կարող հեշտութեամբ թօթափել հին, հաւաքական արատների զարհուրելի բեռը, որ մի թշուառ պատմութիւն փաթթել է մահմեդական պրօլետարիատի վզին։

Վերջապէս, ժողովուրդները առհասարակ «տակից» չեն վերածնվում,—պատմութիւնը գոնէ չէ տալիս այդպիսի օրինակներ։ Անշուշտ, մասսաներն են ժամանակի անիւը առաջ մղող հզօր գործօնը, բայց նրանց շարժումները գիտակցական ու նպատակայարմար դարձնելու համար՝ անհրաժեշտ է միշտ և ամեն տեղ մտաւոր կրթութեան որոշ աշխատանք, որ կատարվում է «պատմական փոքրամասնութեան» ձեռքով։ Մի դարից աւելի է, ինչ սօցիալիզմի գաղափարը ծայր է տուել արևմտեան Եւրոպայում և 75 տարի է, ինչ սկսվել է պրօլետարական գործնական պայքարը կապիտալիզմի դէմ. և այնուամենայնիւ այսօր Եւրոպայում, նոյն իսկ ամենազարգացած ու ամենաինդուստրիալ երկրների մէջ, աշխատաւոր պրօլետարիատի—չենք ասում դեռ գիւղացիութեան—մի ստուար մասը դուրս է մնում սօցիալիստական բանակից. չէ գիտակցում իր պատմական դերը, իր անտագօնիզմը կապիտալի հետ և նոյն իսկ յաճախ այդ կապիտալի ներկայացուցիչներին է վստահում իր շահերը, իր ճակատագիրը։

Մինչև որ Թուրք ժողովուրդը չը ծնէ գաղափարական կուռ, թէկուզ և փոքրաթիւ, բայց իր կոչման բարձրութեան վրայ կանգնած ինտելիգենցիայի մի բանակ՝ Թուրք պրօլետարիատի դասը, ինչպէս և առհասարակ թուրքական առաջադիմութեան գործը մի քայլ անգամ չը պիտի առաջ գնայ։ Սօցիալիստական շարժումը, աւելի քան որ և է այլ շարժում, կարօտ է ինտելիգենցիայի աջակցութեան։ Անցել է ժամանակը, երբ՝ բարբարոսական մի հասկացողութեամբ՝ կարծում էին թէ «վարձու աշխատաւորների դասը կարող են օրինաւոր կերպով պաշտպանել միմիայն վարձու աշխատաւորները»։ Պրօլետարիատը և սօցիալիստական վարդապետութիւնը դուրս են եկել արդէն վաղեմի համքարական սահմանափակութիւններից, սօցիալիզմը լոկ ստամոքսի խնդիր չէ ժողովուրդների համար, այլ հիմնական յեղաշրջման, բովանդակ, լիակատար վերածնութեան մի խնդիր, որ մարդկային էվօլիւցիան առաջին անգամ է հրապարակ հանում. նա, հետևապէս, իր առաջադիմութեան ու յաղթանակի համար պահանջում է ամեն տեսակ կուլտուրական, մշակված ոյժերի աշխատակցութիւնը, նա պահանջում է մտքի հասուն սպասաւորներ, լայն բազմակողմանի կրթութեամբ՝ որոնք կարողանան վարել աշխատաւոր ընդհանրութեան մեծ, պատասխանատու դերը։

Բաւական չէ անգիր անել «դասակարգային» կռւի ֆօրմուլան և անգիր անել տալ բանւորական խմբերին՝ երևակայելով, թէ ինքն ըստ ինքեան պատասխան է տրվում սօցիալական-քաղաքական կեանքի հազարաւոր տանջող հարցերին։ Այդպէս են մտածում, ըստ երևոյթին, հայ, Թուրք և այլ պրօլետարիատների անունից խօսող կովկասեան սօցիալ-դէմօկրատները, այդպիսի եզրակացութեան են բերում վերջին ժամանակներս նրանց ձեռքով կատարված «թէօրիական» մարզանքները, տնտեսական մատերիալիզմի յափշտակումը, անհեթեթ կիրառութիւնները և այլն։

Շաբլօնը և [illegible] ըմբռնումները երբեք օգտակար ծառայութիւն չեն մատուցել… Կեանքի դէմ պէտք է պայքարել այնպէս, ինչպէս պահանջում են նրա իրական ֆակտօրները և ոչ այնպէս, ինչպէս կարդում ենք Էնգելսի ու Կաուցկու բրօշիւրներում։ Թէօրիան մեծ ուժ է, անտարակոյս։ Նրա լոյսը անհրաժեշտ է մեզ՝ ճանապարհ բանալու կեանքի այլազան ու առանձնայատուկ երևոյթների լաբիրինթոսում։ Սակայն, չը պէտք է մոռանալ, որ թէօրիան էապէս վերացական բան է, որ նա մաքրված զտված է երևոյթների հազարաւոր, մանր ու մանր բարեմասնութիւններից, որ իրականութեան մէջ այդ երևոյթները շատ աւելի հարուստ, բարդ ու կնճռոտ են… Դասակարգային կռիւը տարբեր կերպարանք է առնում տարբեր երկրներում ու մթնոլորտներում և երկու հակամարտ դասակարգերի՝ բուրժուազիայի ու պրօլետարիատի՝ անտագօնիզմն ու պայքարը չեն լցնում ամբողջ հասարակական կեանքը։ Կան այդ երկու դասակարգերի միջև այլ և այլ շերտեր, հասարակական այլ և այլ խաւեր, որոնք մշտնջենական փոփոխման, ելևէջների մէջ են, մերթ տրամադրված դէպի պրօլետարիատը, մերթ դէպ բուրժուազիան։ Պէտք է ուշի ուշով հետևել այդ փոփոխութիւններին ու տրամադրութիւններին, ուսումնասիրել ջոկ, առանձնայատուկ կեանքի բնորոշ պահանջները և ըստ այնմ ղեկավարել կռիւը։

Այդ է, որ չեն կարող անել բանւորական մասսաները, որ կարող է և պէտք է անէ ինտելիգենցիան և այն էլ՝ իւրային, համացեղ ինտելիգենցիան։

Թուրք սօցիալիստ կուսակցութիւնը որ դեռ դժբախտաբար, ապագայի իրողութիւն է, պէտք է ինքնաջանս իր ձեռքն առնէ իր համացեղ պրօլետարիատի լուսաւորութեան ու կազմակերպութեան գործը, ինչպէս որ հայ, վրացի, ռուս աշխատաւոր դասակարգերին պիտի կազմակերպեն ու դաստիարակեն հայ, վրացի, ռուս սօցիալիստները։ Ուրիշ ելք չը կայ։ Դա է միակ, բանաւոր ճանապարհը, բար, որովհետև առանձին հաւատ չէր ընծայվում նրանց օգտակարութեանը. նոյն իսկ շատ յաճախ միջոցներ էին ձեռնարկվում՝ բոլորովին անհամապատասխան նոր հրատարակված օրէնքների հիմնական մտքին։ Հասկանալի է, այդպիսի գործողութիւններով չէր կարելի բարի պտուղներ սպասել նոյն իսկ ամենալաւ նախագծերից։ Եւ, յիրաւի, Ռուսաստանում ամեն ինչ կաղում էր, դանդաղում, ամենուրեք լուռ դժգոհութիւն էր զարգանում... Միայն վերջերը հասարակութիւնը մի փոքր կենդանութիւն ստացաւ, ամենքը սկսեցին մի քիչ ազատ շունչ քաշել. կառավարութեան գործողութիւնները վերականգնեցրին անցած թագաւորութեան լաւ տարիների յիշողութիւնը։ Կայսր Ալէքսանդր Նիկօլաեվիչի հէնց մահից առաջ ծագեց այժմ մեր քննութեան առարկայ կազմող միտքը։ Նրա մասին հասարակութեան մէջ վաղուց պտտում էին լուրեր և բոլոր բարեմիտ մարդիկ հոգով համակրեցին այդ մտքին։ Նախագծված նոր ձեռնարկութեան «լուրը» տարածվեց արտասահմանում...

Այդ խօսքերի վրա Միլիւտինին ընդհատում է կայսր Ալէքսանդր III-ը.

«Այո, բայց Վիլհելմ կայսրը, որի ականջին էին հասել լուրերը, թէ իբրև հայրս կամենում է Ռուսաստանին սահմանադրութիւն տալ՝ աղաչում էր նրան ինքնագիր նամակով չանել այդ բանը, իսկ հակառակ պարագային, եթէ գործը շատ հեռուն գնար, որ անկարելի լինէր յետ կենալ և կառավարվել առանց ժողովրդական ներկայացչութեան, Վիլհելմ կայսրը խորհուրդ էր տալ, որքան այդ հնարաւոր է, համեստօրէն անել այդ բանը՝ տալով ներկայացուցչութեան փոքրիկ ազդեցութիւն, պահելով իշխանութիւնը կառավարութեանը»։

Միւսները ընդդիմախօսում էին Միլիւտինին։ Մանաւանդ խիստ էր խօսում Կ. Պ. Պօբէդօնօսցեվը։

Սուրբ սինօդի օբէր-պրօկուրօր Կ. Պ. Պօբէդօնօսցեվը (գունաթափ, որպէս կտաւ, ջղայնաբար բորբոքվում էր)։

«Ձերդ Կայսերական Մեծութիւն, ըստ երդման և խղճի պարտականութեան, ես պարտաւոր եմ արտայայտելու այն ամենը, ինչ որ զգում է իմ հոգին։ Ես ոչ միայն վրդովված եմ, այլ յուսահատութեան մէջ եմ։ Ինչպէս անցած ժամանակներում Լեհաստանի կորստից առաջ ասում էին—«Finis Poloniae», այժմ նոյնը քիչ է մնում ասենք մեզ՝ «Finis Russiae»!

Կծկվում է սիրտս, երբ կշռադատում եմ Ձեր հայեցողութեանը ներկայացված նախագիծը։ Այդ նախագծից խայտառակութեան հոտ է գալիս, կասեմ աւելին՝ նրանից խարդախութիւն է փչում։ Մեզ ասում են, որ օրէնսդրական նախագծեր քննելու համար հարկաւոր է հրաւիրել ժողովրդեան կեանքին ծանօթ մարդկանց, հարկաւոր է լսել էկսպերտներին։ Դրա դէմ ես ոչինչ չէի ունենայ, եթէ միայն այդ կամենային անել։ Էկսպերտները հրաւիրվում էին և հին ժամանակներում, բայց ոչ այնպէս, որպէս այժմ նախագծվում է։ Ո՛չ։ Ռուսաստանում կամենում են սահմանադրութիւն մտցնել, և եթէ ոչ միանգամից, այն ժամանակ կամենում են գոնէ առաջին քայլն անել այդ մտքով... Իսկ ի՞նչ է սահմանադրութիւնը։ Այդ հարցին մեզ կը պատասխանէ արևմտեան Եւրոպան։

Այնտեղ գոյութիւն ունեցող սահմանադրութիւնը գործիք է ամեն մի ստութեան, խաբէութեան, հազար ու մի խառնակութիւնների աղբիւր։ Օրինակներ շատ կան և նոյն իսկ հէնց այժմ մենք տեսնում ենք ամբողջ Ֆրանսիական պետութեան մէջ ծագած կռիւը, որի նպատակն է ոչ ժողովրդի բուն բարիքը կամ օրէնքների կատարելագործումը, այլ ընտրութիւնների հիմնական կանոն փոխելը՝ յաղթանակը փառասէր Գամբէտտային տալու համար, որ ձգտում է պետութեան դիկտատորը դառնալու։

Ահա թէ դէպի ո՞ւր կը տանէ սահմանադրութիւնը։ Մեզ ասում են, որ պէտք է իմանալ երկրի կարծիքը նրա ներկայացուցիչների միջոցով։ Բայց մի՞թէ օրէնսդրական նախագծերը կշռադատելու համար այստեղ եկած մարդիկ լինելու են երկրի կարծիքի իսկական արտայայտողները։ Ես հաւատացնում եմ որ ոչ։ Նրանք միայն պիտի արտայայտեն իրանց սեփական հայեացքները»...

Այստեղ նրան ընդհատում է Ալէքսանդր III կայսրը։

«Ես նոյնն եմ կարծում. Դանիայում ինձ մինիստրները քանիցս ասել են, որ համայնքների ժողովի պատգամաւորները չեն կարող համարվել ժողովրդեան կարիքների իսկական արտայայտիչները»...

«Եւ այդ կեղծիքը, շարունակեց Պօբէդօնօսցեվը,—ըստ օտարերկրեայ սովորութեան, մեզ համար բոլորովին անպէտք, կամենում են մեր դժբախտութեան, մեր կորստեան համար և մեզ մօտ մտցնել... Ռուսաստանը հզօր է եղել շնորհիւ իր միահեծանութեան, շնորհիւ անսահման փոխադարձ հաւատի և սերտ կապի ժողովրդի և նրա Ցարի մէջ։ Մեր ժողովուրդը մեր բոլոր առաքինութիւնների պահպանողն է, շա՛տ բան կարելի է նրանից սովորել։ Այսպէս անուանված զեմստվային ներկայացուցիչները միայն անջատում են ժողովրդին Ցարից»...

Ժողովի հետևանքը յայտնի է։

Ար-Թոն

Օդէսա

ՀՈՂԱՅԻՆ ՎԷՃ

(Նամակ Ելենովկայից փետրվարի 10-ին)

Ծաղկաձորում Ելենովկա մալականի գիւղը շրջապատված լինելով տասնեակ հայ գիւղերով, հիմնված օրից մինչև օրս ունեցել է բոլոր սահմանակից հայ գիւղերի հետ հողային վէճ։ Բոլոր սահմանակից հայ գիւղերի հողերից կտրել յանձնել են մալականներին, և այդ է պատճառը, որ մալականը այսօր երկու-երեքպատիկ աւելի հող ունի, քան իր սահմանակից հայ գիւղացին։ Մալականներին յատկացրած են, կարծես գիտութեամբ, ամենալաւ հողերը, ընդարձակ դաշտ, լաւ փափուկ վարելու հող, չայիր չիման տեղ, և այսօր մալականը, ինչպէս մի աղալար, աւելորդ հողերը ծախում է իր հարևան հայ գիւղացու վրա առաջուց առնելով փողը ամեն մի սաժէնին (3 արշ. լայնութիւն և 100 արշին երկարութիւն) 50—60 կոպէկ. մուշտարու շատութեան պատճառով հիմա գները բարձրացրել են։

Անհերքելի է, որ մալականը երկու-երեք անգամ աւելի հող ունի քան հայ գիւղացին. ահա բերենք մի օրինակ։ Հայ գիւղացին ստանում է նաֆարին (մի անձին) 15—20 սաժէն վարել ցանելու և խոտ հնձելու, իսկ մալականը ստանում է նաֆարին 50—60 սաժէն. այդքան հողին տիրանալուց յետոյ, դարձեալ անբաւական են, միշտ խնդիրք խնդիրքի ետևից տալիս են կառավարութեանը, թէ հող չունենք և չունենք։ Մալականը իր ցաւերը իշխանութեան առաջ կարողանում է քաղցր քաղցր պատմել հասկացնել, իսկ մեր խեղճ գիւղացին ընտրում է երկու ծեր փտած վէքիլներ, որոնք ոչ օրէնքից են տեղեակ լինում, ոչ խօսելու շնորհք ունենում և այդ պատճառով էլ դրանց խնդիրքը իշխանութեան ուշադրութեանը չէ արժանանում։ Այդպիսով կառավարութիւնը, յարգելով մալականների խնդիրքը, դարձեալ կտրել է սահմանակից Ծաղկունք հայ գիւղի հողից մօտ 250 դեսիատին և յանձնել մալականներին, այն հողից, որը 50—60 տարի հայ գիւղացիների սեփականութիւն է եղել։

Ահա եօթը տարի է, որ ծաղկունքեցիք չեն կարողանում իրանց արդար դատը պաշտպանել և հասկացնել կառավարութեանը, որ 50—60 տարի շարունակ իրանց սեփականութիւն համարվող հողը, տրվում է ուրիշին։ Երկար սպասելուց յուսահատված, վերջապէս անցեալ 1905 թւի գարնանը ծաղկունքեցիք կազմում են համախօսական և ամբողջ գիւղով թափվում են իրանցից խլած հանդը և երեք օրվայ մէջ բոլորը վարում ցանում են, ի հարկէ աչքի առաջ ունենալով, որ կարող է ընդհարում լինել մալականների հետ։ Բարեբաղդաբար մալականները խոյս են տալիս ընդհարվելուց և դիմում են կառավարութեանը ու օգնութիւն խնդրում։ Միջամտում է ադմինիստրացիան, յայտնելով մալականներին, թէ ծաղկունքեցիք ցանել են, դուք էլ կը քաղէք և կը տանէք ձեզ համար։ Մալականներն ևս սպասեցին, առանց ընդհարվելու հայերի հետ։ Ադմինիստրացիան, իր խոստման համաձայն, օգնեց մալականներին, նշանակելով մի քանի ստրաժնիկ, որոնք կարգ պահպանեցին, թոյլ չը տալով, որ ընդհարում առաջանայ և այդպիսով մալականները քաղեցին և հունձը տարան իրանց համար։ Կորան խեղճ ծաղկունքեցիների սերմը և աշխատանքը։ Ադմինիստրացիայի այդ վարմունքի դէմ բողոքեցին գիւղացիները, ուղարկելով երկու ծերունի վէքիլներ Փոխարքայի մօտ, որոնք իրանց ցաւերը պատմելով, խնդրեցին շուտափոյթ տնօրինութիւն։ Փոխարքայից մխիթարական պատասխան ստանալով վէքիլները վերադարձան և աւետեցին ժողովրդին, թէ իրանց խնդիրքը յարգված է և շուտով կը վերադարձնեն իրանց հողերը։

Ադմինիստրացիան վճռում է, որ սերմը վերադարձնեն ծաղկունքեցոց մալականներից առնելով 40 խալվար ցորեն։ Դրա համար ընտրված վէքիլներն ամիսներով գնացին եկան, բայց ոչ մի հատ ցորեն չը կարողացան ստանալ մալականներից, չը նայելով, որ գաւառապետն եկաւ այստեղ, և մալականներին հասկացրեց, որ այդ բէրը վերևից է և անքակտելի, պէտք է վճարել ցորենը, բայց մալականները միաբերան հրաժարվեցին մի հատիկ անգամ տալ ծաղկունքցիներին։

Ահա մօտենում է գարունը, շուտով գալիս է վար ու ցանքի ժամանակը և մինչև օրս կառավարութեան կողմից ոչ մի կարգադրութիւն չէ արված, դարձեալ մնում է անորոշ դրութիւնը և երկու գիւղերը պատրաստվում են գնալ և մի և նոյն տեղում ցանքս անել։ Եթէ այս անգամ ծաղկունքեցիք հետևեն անցեալ տարվայ օրինակին, անպատճառ ընդհարում կունենան մալականների հետ և երաշխաւորել չէ կարելի թէ երկու կողմից էլ չեն ունենայ անմեղ զոհեր։ Հրաւիրում ենք կառավարութեան ուշադրութիւնը այդ հանգամանքի վրա։ Ժամանակ է վերջապէս շուտափոյթ բաւարարութիւն արդար կողմին։

Յոյս ունենք, որ մեր այս հրաւէրն անուշադիր չի մնայ։

Դարաչիչակցի

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Թիֆլիս, մարտի 8-ին

Այսօր կարդալով պաշտօնական լրագրումդ Եղիշէ ծ. վարդապետ Մուրադեանի կոչը, որով խնդրում է այն բոլոր անձանց և հիմնարկութեանց, «որոնք որ և է կերպով տուժել են կօնսիստօրիայի պաշտօնեաների անկանոն գործունէութեան կամ այլ հանգամանքի շնորհիւ» դիմեն իրան գրաւոր կամ կանոնաւոր։ Մենք կօնսիստօրիայի ծառայողներս գալիս ենք յայտնելու հետևեալը. 1) Սինօդը իր հրամանի մէջ գրել է «պատուիրել Եղիշէ վարդապետ Մուրադեանին առնել զօրինաւոր քննութիւն ըստ ցուցմանց յօդուածագիր Գրիգորիս քահանայի», ոչ թէ վեր կենալ և մեղադրողի դերը յանձն առնելով՝ կոչ անել. 2) Հայր քննիչի կոչը խիստ առաձգական է. ի՞նչ է նշանակում «անկանոն գործունէութեան կամ այլ հանգամանքի շնորհիւ»։ Օրինակ. ա) Կիրակոսի գործը յետացել է և այդ պատճառով էլ նա տուժել է. նա կը գայ և ներկայանալով հայր քննչին իր սրտի զայրոյթը կը թափէ այս կամ այն ծառայողի վրա գործը ուշացնելու համար, բայց թէ իսկապէս ծառայո՞ղն էր յանցաւոր, որ այդ մարդը տուժել է, թէ ամբողջ կօնսիստօրիայի կազմը՝ ատեանը, որի պ.պ. ատենակալները ժամանակ չունենալով՝ անտարբեր են վերաբերվել դէպի իրանց պարտականութիւնը և այժմ հատուցման ժամին պատասխանատուութիւնը պիտի ծանրանայ միայն անպաշտպան ծառայողի վրա, որովհետև քննչի կոչից այդ հոտն է փչում. և բ) մեզանից մէկը եթէ մի հաշիւ, մի թշնամական վէճ է ունեցել այս և այն անձանց հետ, նրանք կարող են հայր քննչի կոչի համեմատ իբրև «այլ հանգամանքի շնորհիւ» տուժողներ գալ և մեղադրել ծառայողներիս։ Մինչդեռ հայր քննիչը ոչինչ փաստ չունենալով իր ձեռքի տակ և ոչ մի հարց ու պատասխան չառած մեզնից այդ տրամադրութեամբ տոգորված, ուրեմն կասկածից դուրս է, թէ ի՞նչ լինելու է քննութեան արդիւնքը։ Այս ամենը և ուրիշ անձնական հանգամանք ու վերաբերմունք (որոնք դեռ հարկ չը կայ յիշել) ի նկատի առած՝ մենք ծառայողներս դիմեցինք ս. սինօդը այս հեռագրով։ «Քննիչ Մուրադեանցը Գրիգորիս քահանայ Երզնկեանցի հետ առաջնորդարանում երկու շաբաթ խորհրդակցելուց յետոյ դեռ չսկսած քննութիւնը լրագրներով կոչ է անում և հրաւիրում է իբրև մեղադրողներ այն բոլոր մարդկանց, որոնք մեզանից անբաւական են. մինչդեռ այդ Գրիգորիս քահանայի պարտքն էր իր մեղադրանաց կէտերը հաստատել և ոչ թէ քննչի։ Քննիչը, ընդ ամենայնի հակառակ գնալով սինօդի հրամանին, Տէր-Գրիգորիսի դերը ինքն է կատարում, ուստի յարգանօք խնդրում ենք սինօդից նշանակել ուրիշ անաչառ քննիչ»։

Ծառայողներ (5 ստորագրութիւն)

II

Թիֆլիս մարտի 8-ին

«Մշակ»-ի № 50-ում «Դիլավար» ստորագրութեամբ մէկը Հալաբարի թատերասէրների և անկանօնութեան մասին իր թիւր կարծիքը ժողովրդի կարծիք համարելով, յանդգնում է ազդարարել, որ պ. Յովհաննիսեանի խմբի պէս խումբ չը կայ Հալաբարում և առանց ամաչելու խորհուրդ է տալիս, որ միւս սիրողները միանան այդ խմբի հետ։ Պիտի յայտնենք ի գիտութիւն թատերասէր ժողովրդի, որ վերոյիշեալ խումբը—իսկապէս խաղացող կազմակերպութիւն չէ, այլ խմբակ, բաղկացած մի տիկնոջից ու վեց «աշկերտներից։ Անցեալ տարի խումբը ղեկավարել է ոչ թէ պ. Ռ. Յովհաննիսեանը, ինչպէս ասում է պ. յօդուածագիրը, այլ մի ուրիշ մարդ, որի օգնութեամբ խումբը տուել է Մուրաշկօյի թատրօնում 10 ներկայացում, իսկ պ. Ռ. Յովհ-ը լոկ դերակատար է եղել։ Այդ պարոնները իրանց միշտ «Պէպօ»-ով սկսելով, տալիս են միմիայն 4-5 ներկայացում (այն է—«Պէպօ», «Քանդած օջախ», «Էլի մէկ զոհ», երեքն էլ Գ. Սունդուկեանի և «Ասլան-Բալասի») և մի ջուխտ վօդվիլ և... ապա վերջացած են համարում իրանց սեզօնը...

Մանրամասնութիւնների մէջ չը մտնելով, մեր խորին համոզմունքով աւելի նպատակայարմար կը լինէր, որ պ. «Դիլավարը» առանց ստորագրվելու խորհուրդ տար դրանց հեռանալ գեղարուեստի տաճարից։ Թատերասէր ժողովուրդը ձեզ պէտների կարօտ չէ, քանի որ կան և եղել են հմուտ և փորձառու սիրողներ—(ինչպէս օրինակ պ. պ. Գ. Փիրումեանը և Սարեանը—Մուրաշկօյում), որոնք ծառայել և ծառայում են միմիայն ժողովրդի համար և որոնցից միշտ գոհ է եղել թատերասէր հասարակութիւնը։ Իսկ պ. Ռ. Յովհաննիսեանը մաքուր հայերէն չը գիտէ։

Ցուշիկ-Ժան

ՀԵՌԱԳԻՐ

Շուշի 8 մարտի 3 ժամ 27 ր.

Ժամանակի ոգին բնականաբար յուզմունք առաջացրեց և մեր հոգևոր դպրոցի սաների մէջ։ Բայց մենք չը հետևեցինք միւս դպրոցների օրինակին։ Աշակերտների անմեղ և անվնաս պահանջներին տուինք բաւարարութիւն։ Պարապմունքները կանոնաւոր կերպով շարունակվում են։ Մասնաւոր աղբիւրներից բղխող աղճատված լուրերին չը պէտք է նշանակութիւն տալ և հաւատ ընծայել։

Աշոտ եպիսկոպոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սօլդատսկի բազարում, Ներսիսեան դպրոցին պատկանող այրված շինութեան տեղ, նորը կառուցանելու հարցը հոգաբարձութիւնը, աչքի առաջ ունենալով, որ մայիսին նոր հոգաբարձական ընտրութիւններ պէտք է կատարվեն, առայժմ առկախ թողեց, վերապահելով այդ հարցի լուծումը նոր հոգաբարձական խորհրդին։

—

Թիֆլիսից Бирж. Вѣд. հաղորդում են. Փոխարքայի նախագահութեամբ կայանալու է խորհուրդ, որտեղ պէտք է քննվէ, գեներալ Ալիխանովի ներկայացրած՝ երկիրը խաղաղեցնելու միջոցների մասին, ծրագիրը։ Ինչպէս լսում ենք, այդ ծրագիրը կայանում է նրա մէջ որ ագիտացիան պէտք է ճնշել ույժով, զօրքերը բաժանել մաս մաս գաւառներում և արշաւանք սկսել Սվանէթիայի վրա, որը գեներալ Ալիխանովի կարծիքով, յեղափոխականների բոյնն է։ Մի և նոյն ժամանակ այդ ծրագիրը ոչ մի բարենորոգութիւն չէ խոստանում ծայրայեղ չքաւորութեան հասած ազգաբնակութեանը։ Յիշեալ բոլոր հարցերի մասին թոյլտուութիւն ստանալով, գեներալ Ալիխանովը նորից վերադարձաւ իր տեղը։

—

Ինչպէս հաղորդեցինք մեր ընթերցողներին Թիֆլիսում բօրսա (բիրժա) հիմնելու խնդիրը առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութիւնը բօրսայի կանօնադրութեան նախագծի հետ ուղարկել է քաղաքիս պետական բանկի եզրակացութեանը։ Այժմ հաստատ աղբիւրից իմանում ենք՝ որ պետական բանկը իր կողմից օգտաւէտ է գտել բօրսայի հիմնարկելը Թիֆլիսում և մօտ օրերս պաշտօնապէս առևտրականների վարչութեանը տեղեկութիւն կը տրվի այդ խնդրի նպաստաւոր լուծման մասին։

—

Թիֆլիսի նահանգական Պետական Դումայի համար հաստատված ընտրողական գործերի վերաբերեալ մասնաժողովը բաղկացած է հետևեալ անդամներից. Թիֆլիսի նահանգական դատարանի նախագահ պ. Լեմմերման որ և մասնաժողովի նախագահ է, իսկ անդամներն են Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար իշխ. Ջորջաձե, Թիֆլիսի կազեօննի պալատի կառավարիչ պ. Միխայլով, նահանգական դատարանի անդամ պ. Ջեմեսով և նահանգական ատեանի շինարարական գործերի անդամ պ. Շէստակօվ։ Մարտ 6-ին այդ մասնաժողովի նիստում մեծամասնութիւնը այն կարծիքը յայտնեց, որ բանւորական լիազօրը մտնում է Թիֆլիսին յատկացված 80 թւի մէջ։

—

Գանձակի նահանգի Ջէգամի և Քարվանսարայի դատաստանական-հաշտարար մասի սահմանները փոփոխելու հարցի առիթով, գեներալ-ադիւտանտ կոմս Վօրոնցով-Դաշկովը Գանձակի նահանգական դատարանի ծրագրած փոփոխութիւնները, Ղազախի գաւառի Միխայլովկայի և Ջեմբարակսի գիւղական համայնքները, այս վերջինիս մէջ մտնող գիւղերով հանդերձ, որոնք գտնվում են Թարսաչայ գետի կիրճում, հաշտարար դատարանի իրաւասութեանը ենթարկելու համար, միանգամայն նպատակայարմար և գործի ու ազգաբնակութեան շահերի տեսակէտից համապատասխան համարեց, ուստի Գանձակի նահանգական դատարանի այդ ծրագիրը հնարաւոր գտաւ հաստատելու։

—

Մարտի 7-ին կայացաւ ազնուականների առանձին մասնաժողովի մասնաւոր խորհուրդը, որին յանձնարարված էր թեկնածուների ցուցակներ կազմել և իրանց կարծիքները յայտնել Պետական Դումայի լիազօրներ ընտրելու համար։ Մասնաժողովը միաձայն թեկնածու է ընտրել Պետական Դումայի համար իշխ. Ճավճավաձէին և Գեդէվանովին։ Վճռված է խնդրել բարձր իշխանութեան, զինւորական դրութիւնը և ուրիշ ռէպրէսիաները վերացնել։

—

Երկուշաբթի, մարտի 6-ին Լանչխուտ գիւղի վրա յարձակվել են զինւորներ. ձերբակալել են՝ Գ. Ջէնաիշվիլուն, Վ. Ճէզիայլին, Պ. Տրլօսանուն և ուրիշներին։ Վերջինը ճանապարհին փախել է։ (Պատ. գազ.)։

—

Ամենայն հայոց կաթողիկոսը կոնդակով նշանակել է Ն. Ա. Գրիկուրովին Վրաստանի և Իմերէթիայի հայ-լուսաւորչական թեմի ճարտարապետ և Էջմիածնի վանքի ինժեներ Թիֆլիսում։

—

Քութայիսի զօրքերի նախկին հրամանատար գեներալ Շիշկօվսկին ուղևորվեց Պետերբուրգ, կենդրոնական կառավարութեանը բացատրութիւններ տալու Կվիրիլում և Բէլօգորում Տենգինսկի գունդի երկու վաշտերի զինաթափ անելու համար։ Զինաթափ արված վաշտերը, իրանց սպաներով հանդերձ, ինչպէս լսել է «Современникъ»-ը, դատի են ենթարկվելու։

—

Երեքշաբթի, մարտի 7-ին Թիֆլիսում գտան սօց.-յեղափոխականների գաղտնի տպարանը։ Տպարանում գտան զինւորների վերաբերեալ թռուցիկներ։ Ձերբակալեցին միայն 1 օրիորդի։ (Պատ. Գազ.)։

—

Թիֆլիսի ռուսաց թեմական իգական դպրոցի մանկավարժական խորհուրդը այդ դպրոցի վերակազմութեան ծրագիրը արդէն մշակել, վերջացրել է և օրինական կարգով ներկայացրել է ռուսաց Սինօդին։

—

Սինօդից շրջաբերական է ստացվել Թիֆլիսում, որ այս տարի Թիֆլիսի իգական թեմական դպրոցում յաջորդ դասարանները փոխադրվելու համար քննութիւններ չը պէտք է լինեն։ Քննութիւններ կը լինեն միայն աւարտման դասարաններում։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան ստատիստիքական բիւրօն ստացել է ընտրողական ցուցակներ Թիֆլիսի թեմական իգական դպրոցից (18 ընտր.) և սբ. Նինայի կանանց բարեգործական ընկերութիւնից (58 ընտր.)։

—

Պետական բնակարանային հարկերի բաշխումը Թիֆլիսում, 1906 թւականի համար, արդէն վերջացրել է հարկային տեսուչը և մօտ օրերումս այդպիսի տուրքեր վճարողներին ուղարկվելու են համապատասխան թերթիկներ։

—

Ինչպէս լսում ենք՝ Սուխումի շրջանի զինւորական դրութեան մէջ դնելու պատճառը բացառապէս նրա աշխարհագրական դիրքն է, որ գտնվել է Չէրնոմորեան և Քութայիսի նահանգների մէջ. այս վերջին նահանգներից հակակառավարչական յայտնի ագիտատօրներ փախչում և պատսպարվում են յիշեալ շրջանում։

—

Թիֆլիսի առևտրական և մանուֆակտուրային մասնաժողովի կողմից, Պետական Խորհուրդի ընտրութիւններին մասնակցելու համար, ընտրվել են յիշեալ մասնաժողովի անդամներ Ա. Ֆ. Փրիդօնեան և Ի. Ֆ. Տիգրանեան։

—

Թիֆլիսում կազմվում է ծնողների կենտրոնական կրուժօկ, որի մէջ պէտք է մտնեն քաղաքում գոյութիւն ունեցող տեղական դպրոցների բոլոր ծնողական կրուժօկները։ II արական գիմնազիայի ծնողական կրուժօկի խորհուրդը որոշեց խնդրել քննելու Բագրի գիմնազիայի աշակերտ Թաւրիզեանին 6-րդ դասարան։ Մի և նոյն գիմնազիայի մանկավարժական խորհուրդը, քննելով ուսումնարանական շրջանի հոգաբարձուի, իրան ուղարկած, ծնողական կրուժօկի խնդիրքը՝ մեծ պատրաստական աշակերտների համար կօնկուրսի քննութիւնը վերացնելու I դասարան փոխելիս, ցանկալի համարեց յարգել այդ խնդիրքը։

—

Ինչպէս հաղորդում է «Արշալոյս» թերթը, թոյլտուութիւն է ստացվել Շամախի քաղաքում ռէալական դպրոց բանալու։ Այդ նպատակով վաղուց արդէն հարուստ Բուդաղեանը նուիրել է 45,000 ռուբլի։

—

Ինչպէս լսում ենք, Բ. Ս. Երիցեանը նորից խնդրամատոյց է եղել Թիֆլիսի նահանգապետին՝ թոյլատրելու իրան հրատարակել Թիֆլիսում, իր խմբագրութեամբ 1) երգիծաբանական կիսամեայ ռուսերէն լեզուով մի թերթ, «Жгутъ» անունով, և 2) գրականական-գեղարուեստական կիսամեայ հայերէն մի թերթ, «Թատրօն և գեղարուեստ» անունով։

—

Վրաց հրապարակախօս Սախօկիան, որը կալանաւորված էր Սուխումում, ինչպէս մեզ հաղորդում են, այժմ ազատված է։

—

Երեքշաբթի, մարտի 7-ին, կայացաւ Թիֆլիսի արական առաջին գիմնազիայի երրորդ (և նրա զուգընթաց) դասարանների աշակերտների «ծնողական շրջան»-ի նիստը։ Չը նայելով որ այդ երկու դասարանները 170-ից աւելի աշակերտներ ունեն—ինչպէս և միւս ուսումնարաններում, ներկայ էին նիստին ծնողներից մի աննշան թիւ—ընդամենը 18 հոգի, որոնք քուէարկութեամբ և կրկնաքուէարկութեամբ իրանց միջից ընտրեցին 10 պատգամաւոր որոնք իրանց կողմից որպէս ներկայացուցիչ գիմնազիայի մանկավարժական ժողովներին մասնակցելու «ծնողական շրջանի» կողմից միաձայն ընտրեցին պ. Յովսէփ Մելիք-Բէգլարեանին, որը շատ տարիներ մասնաւոր ուսումնարանի կառավարիչ է և միաժամանակ իրաւասու քաղաքային խորհրդի։

—

Տեղական լրագրների հաղորդած այն լուրը, որը տարաբախտաբար արտատպել են և՛ մի քանի հայ լրագրներ, որ իբր ս. Նունէի օրիորդաց ուսումնարանում, մարտի 3-ին, բացի աղօթատան բացումը,—մայրենի լեզու և կրօն դասաւանդելու համար ևս առանձին դասարան է բացվել—հիմնովին սխալ է։ Այդ ուսումնարանում կրօնի ուսուցիչ մոլլա Հիւսէյին էֆենդին վաղուց է, ինչ որ կրօն և լեզու է աւանդում և այդ օրը լոկ մի աղօթատուն է բացվել։ Սրա հետ միասին աւելորդ չենք համարում հաղորդել, որ ս. Նունէի օրիորդաց ուսումնարանի դիմաց գտնվող Անդրկովկասեան օրիորդաց ինստիտուտում մահմեդական աշակերտուհիների թիւը կրկնապատիկ է, քան ս. Նունէի օրիորդաց ուսումնարանում, ուր ընդամենը 5 աշակերտուհի է սովորում և ուր այս օրերս ընդունվել է և մի նորեկ աշակերտուհի (Վեզիրովա), այն ինչ ինստիտուտում մահմեդական աշակերտուհիները 12 հոգի են. դրանք յատուկ աղօթատուն չունենալով՝ այսուհետև իրանց կրօնական արարողութիւնը կատարելու համար պէտք է յաճախեն ս. Նունէի օր. ուսումնարանի նորաբաց աղօթատունը։ Ուրեմն վերոյիշեալ երկու գիշերօթիկ ուսումնարանների մահմեդական աշակերտուհիների թիւը անում է ընդ ամենը 18 հոգի։ Ինստիտուտում կայ յատուկ հայոց եկեղեցի, որտեղ յաճախում են և ս. Նունէի օր. ուսումնարանի գիշերօթիկ հայ սանուհիները։

—

Պետերբուրգի քաղաքապետը թոյլտուութեան վկայական է տուել հրատարակելու Պետերբուրգի մէջ հայերէն և ռուսերէն լեզուներով մի թերթ «Սափրիչ-Անի» անունով. հրատարակիչն է Դ. Գ. Օքրոյեանց, խմբագիրը՝ Բ. Ե. Գալուստեանց։

—

Մամուլի վերաբերեալ գործերի գլխաւոր վարչութիւնը քրէական դատ է սկսել «Страна» թերթի խմբագիր Մ. Մ. Կօվալէվսկու դէմ, «Вечерн. Голосъ»-ի, Заноза, Наканунѣ

մանաւանդ կովկասեան Բաբելոնում։

Մեր միտքը սխալ չը հասկանան։ Ազգային առանձնացում չենք քարոզում, այլ կազմակերպական ինքնավարութիւն։ Թող ամենաջերմ, ամենամտերմական կապ պահպանվի թուրք, ռուս, հայ ու վրացի պրօլետարիատների ու սօցիալիստների մէջ, թող փոխադարձ եղբայրական համերաշխութիւն տիրէ նրանց շարքերում.—և մենք կը ձգտենք այդ բաղձալի նպատակակէտին։ Բայց չէ կարելի սահմանափակվել պրօլետարիատով, այլ ըստ կարելւոյն պէտք է աշխատել լայնացնել համերաշխութեան պրօպագանդը, տարածելով այն ամբողջ թուրք ժողովրդի վրա։

Աւա՜ղ... այս հաճելի խորհրդածութիւնների ընթացքում մենք մի վայրկեան չենք անգիտանում արիւնոտ ներկան. չենք մոռանում, որ դեռ աւերակները ծխում են, որ ամեն օր հարիւրաւոր շիրիմներ են բացվում մեր դժբախտ երկրի ամբողջ տարածութեան վրա՝ անմիտ եղեռնագործութեան զոհերին ամփոփելու համար... Մենք իդիլլիայի բանդագուշանքներով չենք տարված և գիտենք, ցաւ ի սիրտ, որ երկու դարևոր հարևանների դրացիական կապը մահացու հարուած է ստացել, որ բացվել է մի սև դարագլուխ, սկիզբ է դրվել անվերջ, եղբայրադաւ ոճիրների, որոնք հաւանօրէն կը շարունակվեն փոքրիկ չափերով նոյն իսկ արդար ու օրինաւոր կարգերը հաստատվելուց յետոյ. մի դրութիւն՝ որի շատ թէ քիչ արմատական բուժման հոգսը կը պահանջէ, անպայման պօստուլատի պէս, ըստ կարելւոյն անջատել երկու տարրերը, քչացնել նրանց շփման կէտերը, գէթ ոչ մի տեղ չը թողնել հայկական թոյլ փոքրամասնութիւն և աշխատել որոշ վայրերում կազմել միապաղաղ հայ ազգաբնակութիւն։

Հայ ժողովուրդը չէ բռնանում ոչ ոքի իրաւունքների վրա. նա լցված է խոր ու անկեղծ բարեացակամութեամբ դէպի բոլոր դրացի ժողովուրդները, բայց նա իրաւամբ ըմբոստանում է պատմութեան աղճատած տարկանոնութիւնների դէմ, որոնց շնորհիւ այսօր նա անկարող է հանդիսանում իր տարրական կուլտուրական դէպքերը հոգալու իր երկրի մէջ, ստիպված է մտածել իր ֆիզիկական գոյութեան մասին, և ինքնապաշտպանութեան կռիւների թեք ուղղութեամբ սահելով, վայրենի հրոսակների հետ շարունակ գործ ունենալով, ինքն էլ հետզհետէ գլորվում է վայրենութեան գիրկը... Գէթ այժմ նա ուզում է մեղմել այդ տարկանոնութիւնների պատճառած չարիքները, ապրել փոքր ինչ գլուխը հանգիստ, ըստ կարելւոյն ամփոփված իր ցեղագրական սահմանների մէջ։

Սակայն, այդ բոլորը ապագայի գործ է. իսկ ի՞նչ անել առ այժմ։

«Կռուել էին բռնապետական ռէժիմի դէմ, նուաճել ռամկավարական ազատութիւն, որը վերջ կը տայ խուլիգանութեան ու ազգերի կռիւներին»,—թելադրում է մեզ սօցիալ-դեմօկրատական խրոխտ ֆրազէօլոգիան։ Ջրի, անմըտած մի թելադրութիւն, որ մինչև իսկ ամաչում էք հերքել,—որ համարեա նոյնքան արժէք ունի մեզ զբաղեցնող խնդրի տեսակէտից, որքան միամիտների ու լաւատեսների ծանօթ յորդորները թափօրներ կազմել, թուրք-հայկական կօնգրէսներ գումարել՝ հաշտութիւնը իրագործելու համար։

Հայը իր բոլոր ույժերով, միացած վրացիների, միացած ռուսների, լեհերի, հրէաների հետ՝ կարող է ամբողջ տարիներ կռուել բռնապետութեան դէմ և էլի չը ստանալ այն ցանկալի կարգերը, որոնք ի վերջոյ պէտք է խաղաղացնեն մեր ալեծուփ երկիրը։ Իսկ այդ տարիների ընթացքում ո՞վ պէտք է օգնէ մեր խեղճ ժողովրդին, որից խլում են ինքնապաշտպանութեան միջոցները և ձեռք ու տոր կապած, մատնում գազաններին։ Տարիների չէ՝ ամիսների ընթացքում, չինգիզխանական վոհմակները զէնքի հետ կը հաւասարեցնէին հայաբնակ վայրերը և Ռուսահայաստանը կը վերածվէր Տաճկահայաստանից էլ աւելի ցնցող, էլ աւելի վիթխարի մի գերեզմանոցի...

Ի՞նչ անել ուրեմն...

Մենք համերաշխութեան ու միջազգայնութեան պարոլով ենք հրապարակ եկել և համոզված ենք, որ թուրք մասսաները, թէև չափազանց ստոր գործիք, բայց, վերջապէս, գործիք են միայն մի նզովեալ ռէժիմի ձեռքում, որը ուզում էր ազգերը բաժանելով յաղթահարել իր տիրապետութիւնը, բայց որը հետզհետէ խորտակվում է իր լեռնացած ոճիրների ծանրութեան տակ...

Մենք ենք գարշելի դաւադրութեան զոհը, բայց դարձեալ մենք ենք, որ այսօր անընդհատ ու անկեղծօրէն հաշտութեան յորդորներ ենք կարդում, խաղաղութիւնը այս կամ այն վայրերում կնքվելուց յետոյ՝ հոգում ենք նրա շիտակ ու լայն իրագործումը, պատժելով նոյն իսկ մեր սեփական շարքերի զինւորներին, երբ նրանք այս կամ այն ձևով կարգը խանգարող են հանդիսանում։

Մեր կուսակցական հակառակորդները մինչև օրս չէին հաւատում մեր համերաշխ տրամադրութիւններին և «նացիօնալիստական դըրդումներ» էին տեսնում հայերի գործողութիւնների մէջ. բայց այժմ ամենասկեպտիկներն անգամ համոզվեցին, կամ գոնէ պէտք է համոզվէին Թիֆլիսի վերջին անցքերից յետոյ, ուր Սօցիալ-Դեմօկրատիան—ամբողջ մի տարվայ արիւնհեղութիւնների ու սարսափների ընթացքում ձեռնպահ մնալուց և բէզօնեօրի ու դատախազի անարժան պաշտօնը կատարելուց յետոյ—վճռեց վերջապէս, (բնաջնջման ալիքը հասել էր Կովկասի մայրաքաղաքին) գործօն մասնակցութիւն ընդունել անցքերի մէջ. խաղաղարար միջնորդի դեր ստանձնած՝ նա կանգնեց զինված շարքերով հայ ու թուրք բանակների միջև, բայց թուրքերից գնդակներ ստանալով և երկու զոհ տալով, ետ քաշվեց։ Այդպէս չէ, ի հարկէ, որ պիտի վարվէր բուն գաղափարական կուսակցութիւնը, սակայն դրա վրա չը ծանրանանք։

Այո, ամենասկեպտիկ դիտողին անգամ պարզված է այսօր, որ մարդկայնութեան, ազգերի համերաշխութեան քարոզները առայժմ «ձայն բարբառոյ» են բիրտ, նախապատմական հօրդաների մէջ, որոնք «համերաշխութիւն» խօսքի տակ հասկանում ու յարգում են միմիայն ույժ...

Յարաբերութիւնները հասել են բորբոքման գագաթնակէտին։ Փոխադարձ հաւատը իսպառ մարել է և տեղի է տուել անզուսպ, տենդային սպառազինութեան՝ երկու կողմերից։ Եթէ թուրք առաջնորդները և նրանց հլու կամակատարները չեն վստահում մեր խաղաղասիրական ծանուցումներին, երդման ու յորդորներին—մենք էլ անկարող կը լինենք հաւատալ նրանց, քանի որ այնքան յաճախ և այնքան անարգ փքքրոտութեամբ խոստմնազանց եղան։

Կռիւը, ուրեմն, իր բոլոր արհաւիրքներով շարունակվելու է, իբրև փաստ, ճակատագրական մի իրողութիւն, եթէ այդպէս են ուզում թուրքերը։

Ոչ, հայը էլ չէ ուզում էշ-նահատակի անպատիւ դերը։ Դարեր շարունակ խաչ ու աւետարանը կրծքներիս սեղմած՝ համերաշխութեան քարոզը հնչեցրինք—և կոտորվեցինք, գթութի՛ւն աղերսեցինք—և կոտորվեցինք։ Շատ արդէն վայելեցինք կոտորվողի հռչակը, ամբողջ տիեզերքը սասանեցրինք մեր մարտիրոսութեամբ—հերիք է։ Երբեք յարձակողական ախորժակներ չենք ունեցել, երբեք թալանի ու աւարի արշաւանքներ չենք խրախուսել. մեր հիմնական մտահոգութիւնն է եղել ամեն տեղ՝ պատրաստել մեր խեղճ, հալածական ժողովրդին, վարժեցնել նրան ինքնապաշտպանութեան դպրոցի մէջ, ապահովել նրա խաղաղ, կուլտուրական գոյութիւնը բռնաւորների հարուածների դէմ. բոլորը գիտեն այդ—թէ թշնամի և թէ բարեկամ։

Էլ թող լռեն չարաշուք ձայները։ Թող բոլոր նրանք, որոնց հաճելի է ներկայ տագնապին զբաղվել պարապ, սխօլաստիկական վիճաբանութիւններով, լաւ գիտակցեն, որ մի ժողովրդի պէտք է ամենից առաջ տալ ապրելու հնարաւորութիւն. Primum vivere deinde philisopharis. նախ ապրել և ապա փիլիսոփայել։

Զարմանալի է մարդկանց վերաբերումը։ Հայ ինքնապաշտպան կազմակերպութեան հասցէին յաճախ այնպիսի մեղադրանքներ են տեղում և այնպիսի պահանջներ, որ թւում է թէ նրանց՝ այդ անզուսպ դատախազներին գոհացում կը տայինք՝ միմիայն խպառ համակերպելով, Քրիստոսի ու Տօլստօյի հրահանգին հետևելով, կամ պարզապէս հայ ժողովուրդը բախտի ալիքներին մատնելով... Երբեք, ոչ մի օրինաւոր հասարակութեան մէջ, կուսակցական հակառակորդութիւնը այսքան եղկելի ընթացք չէ բռնել, և մենք մեր անվերջ ճառամարտութիւններով հայ նացիօնալիզմի ու կապիտալիզմի մեղսակցութեան մասին՝ առնուազը նմանում ենք այն տխրահռչակ բիւզանդացիներին, որոնք կլանվել էին աստուածաբանական զազրելի վէճերով, այն միջոցին, երբ տաճիկը սպառնալի կանգնել էր նրանց դրան շէմքում...

Ոչինչ չէ կարող շեղել մեզ՝ մեր բռնած ընթացքից։

Անէծք սկողին։ Մենք չենք, որ նիւթեցինք սադայէլական Դաւը և տասնեակ տարիներով յետ մղեցինք մեր երկրի առաջադիմութեան անիւը։ Ի՞նչ էինք երազում և ինչ եղաւ...

Բայց հայ ժողովուրդը, հայ մարտական կազմակերպութիւնը այժմ ևս ամեն վայրկեան պատրաստ են սիրով վերադառնալ նախկին վիճակին։ Համերաշխութեան համոզված պաշտպան՝ «Դաշնակցութիւնը» անմիջապէս վար կը դնէ զէնքը և եղբայրաբար կը հաշտվի հակառակորդի հետ, հէնց որ վերջինը նոյնպէս ցոյց կը տայ շիտակ ու անկեղծ խաղաղասիրական տրամադրութիւն։

Հայը գարշում է միջազգային կռւից և չը նայած բոլոր արեան ու սարսափներին, նա դարձեալ հաւատում է—այստեղ է գուցէ նրա փոթորկալի գոյութեան, նրա անսովոր դիմացկունութեան մեծ գաղտնիքը—որ մի օր, վերջապէս, ազգերի եղբայրութեան գաղափարը կը յաղթանակէ իր բազմատանջ հայրենիքում, կանցնի դարերի պղտոր հոսանքը, շուրջը կը լռեն թունաւոր կրքերը, կը վերանայ ատամների գազանային կրճտոցը, և իր մաճին, արօրին փարած, իր սեփական հանճարին ապաւինած, անդորր սրտով կը շարունակէ իր ստեղծագործող աշխատանքը։

Թուրքն էլ կը փոխվի... Հին, քարացած պաշտամունքներն էլ կանհետանան ժամանակի համայնաջինջ ալիքների մէջ... Ապագայի հոյակապ Արևը կը ճառագայթէ այն բոլոր հաստատութիւնների ու դօգմաների փլատակների վրա, որոնք այսօր ըմբոստ, թշնամի են քաղաքակրթութեան, և ժողովուրդները՝ Ռամկավարութեան հովանու տակ եղբայրացած՝ կը տօնեն միասին երբեւէ պանծալի դաշնակցութիւնը—Աշխատանքի, Ազատութեան և Խաղաղութեան։

Ego

և ուրիշ էլի չորս Թերթերի դէմ գանազան յօդուածների համար: (Русск. Гос.)

Ներքին գործերի մինիստրութիւնը, "Наша Жизнь»-ի ասելով, ցուցակագրել է այն բոլոր վնասները, որ առաջացել են ագրարական անկարգութիւններից եւրօպական Ռուսաստանի 19 նահանգներում և Էստլանդական նահանգում: Ընդհանուր վնասների Թիւը հասնում է 31,312,865 րուբլու: Ամենամեծ վնասը կրել է Սարատովի նահանգը 9,550,320 ր. յետոյ Սամարայինը՝ 3,915,017 ր. իսկ ամենաքիչը Բեսարաբիայինը, 4,540 րուբլի: Առանձին խորհուրդը հնարաւոր համարեց վնասների համար յատկացնել հողատէրերին 10 միլիօն րուբլի, որը տրվում է իբրև օժանդակութիւն երկարատև ժամանակով, առանց տոկոսի, արտեսութիւնը վերականգնելու նպատակով:

Կանանց, տղամարդկանց հետ համահաւասար իրաւունքներով, համալսարան մտնել Թոյլ տալու հարցը, ինչպէս հաղորդում է «Веч. Голосъ» Թերթը, Պետերբուրգի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Իզվօլսկու նախագահութեամբ կայացած առանձին մասնաժողովում, վճռված է դրական կերպով: Կանանց համալսարան ընդունելու համար պահանջվում է, որ նրանք աւարտած լինեն, կլասիքական ծրագիր ունեցող գիմնազիաների դասընթաց, կամ Թէ ունենան վկայական, որ կլասիքական գիմնազիաներում լրացուցիչ քննութիւն են տուել: Համալսարան մտնելու համար առանձին կրթական ցենզ նշանակելու հարցը առ այժմ մնում է առկախ: Երևի ամեն մի ֆակուլտետի կառաջարկվի կարծիք յայտնել մասնագիտական լրացուցիչ քննութիւնների համար, որից յետոյ միայն այդ հարցը կը քննվի ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ: Ժամանակաւոր օրէնքների հրատարակութիւնը, կանանց համալսարան մտնելու մասին, սպասվում են մօտ ժամանակներումս:

Երկրագործական մինիստրութիւնը 900,000 րուբլի է յատկացրել կենտրոնական Ռուսաստանի գիւղացիներից 21,000 ընտանիք գաղթեցնելու Սև Ծովեան ափերը: Գաղթականների համար արդէն պատրաստել են 215,000 դեսեատին հող, և իւրաքանչիւր ընտանիք կը ստանայ 180 րուբլի տուն շինելու և կահաւորելու համար. բացի դրանից, իբրև օժանդակութիւն տրվելու է ցեղական անասուն, պտղատու ծառեր և կատարելագործված գիւղատնտեսական գործիքներ: Գաղթականութիւնը մտադիր են սկսել գարնանից: «Р. В.»

Կոմս Վիտտէի կարգադրութեամբ, Պետերբուրգի դատաստանական պալատը այսօր սկսել է քննութիւն կատարել քաղաքապետի տպարանում տպագրված ռուս ազգի միութեան Թուցիկների մասին: Մի և նոյն ժամանակ հրամայված է կալանաւորել այդ Թուցիկները, որտեղ էլ որ գտնվելու լինեն նրանք: «Р. В.»

Միտավայից «Русск. Газет.»-ին հաղորդում են. արտասահմանեան Թղթակիցների բիւրօյի մօտաւոր հաշւով, սպանվածների Թիւը, խռովութիւնները ճնշելու ամբողջ ժամանակամիջոցում, սկսած 1905 Թւի դեկտեմբերի 12-ից մինչև 1906 Թւի փետրվարի 24-ը, հասնում է 3,765 հոգու, որոնց Թւում 237 կին:

«Русь» Թերթում տպագրված է կարճ, բայց ազդու հետևեալ նկատողութիւնը: Շմիդտի պաշտպաններին մերժել են. 1) Կանչելու այն բոլոր վկաներին, որոնց նա մատնացոյց է արել. 2) Դատաւորների Թւից հեռացնելու այն երեք սպաներին, որոնք Սեվաստոպօլի յուզումների ժամանակ «Օչակով»-ը ռմբակոծող նաւերին հրամանատար էին. 3) Շմիդտին բժշկական քննութեան ենթարկելու. 4) Շմիդտը միշտ ժողովրդի և Թագաւորի միութեան կուսակից էր. 5) Նա միշտ հակառակ էր զինված ապստամբութեան. 6) Նաւաստիների հրամանատարութիւնը նա յանձն առաւ միայն անկարգութիւնները զսպելու նպատակով: Նա մահվան է դատապարտված կախաղանի միջոցով:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը ուղարկել է շրջանային հոգաբարձուներին մի շրջաբերական, որտեղ, յիշելով միջնակարգ դպրոցների պարապմունքների անկանոն ընթացքի մասին, առաջարկում է դպրոցների դիրեկտորներին միջոցներ գործադրել այդ բանի առաջն առնելու համար, իսկ այն աշակերտներին, որոնք բաց կը Թողնեն դասերը, Թոյլ չըտալ աւարտման և լրացուցիչ քննութիւններ տալու, նոյնպէս և չը փոխել յաջորդ դասարանները: Բացի դրանից միջնակարգ դպրոցների վարչութիւնը պարտաւոր է իւրաքանչիւր ամիս ներկայացնել շրջանի հոգաբարձուին 5-րդ դասարանից սկսած բարձր դասարանների աշակերտական ցուցակները, յիշելով, մարտի մէկից սկսած, բաց Թողնված դասերի Թիւը: «Р. В.»:

Պետերբուրգի լուցկի արտադրող գործարանատէրերը միմեանց մէջ համաձայնութիւն են կայացրել, որ այսուհետև ամենմէկ արկղ լուցկին, որը պիտի պարունակէ 1000 տուփ լուցկի—8 ր. 50 կոպէկից պակաս չը ծախեն վաճառականներին:

Տրապիզոնի վրայով սկսվել է շաքար արտահանվել Պարսկաստան՝ Աւստրիայից: Մասնագէտները Աւստրօ Վենգրիայի շաքարի Պարսկաստան ներմուծութեան օրէց օր աճումը բացատրում են Ռուսաստանի մէջ տիրող շաքարի առևտրի խառնակ դրութեամբ:

Առևտուրի և արդիւնաբերութեան մինիստրութիւնը գործարանների վրա հսկող տեսուչների կազմակերպութեան համար փոփոխութիւններ մտցնելու մտքով պարապմունքներ է սկսել: Մտադիր են գործարանական տեսչութեան շրջանները մեծացնել և ծառայողների Թիւը աւելացնել: Մոսկվայի շրջանի գործարանատէրերը մի յատուկ ընտրած մասնաժողովի միջոցով մշակում են այդ շրջանի գործարանատէրերի «Միութեան» կանոնադրութեան նախագիծ՝ որը բանւորական խնդրի հետ սերտ կապ ունի: Մարտի 10—15-ին նշանակված է մօտ 10 նահանգների գործարանատէրերի համաժողով՝ այդ կանոնադրութիւնը քննելու: Համաժողովին հրաւիրված են մինչև 700 ներկայացուցիչ խոշոր գործարանատէրերից, որոնք ունեն 500,000 հոգի բանւորներ:

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են մարտի 6-ին. «Այսօր, Երևանի նահանգական դատարանում տեղի ունեցաւ 29 յեղափոխական հայերի դատը, որոնք 1904 Թ. յուլիսի 12-ին, Միհրան Բէջիզեանի խմբապետութեամբ, անցնելով ռուսաց սահմանից և ընդհարվելով տաճկաց զօրքերի և քրդերի հետ նրանց բարբարոսութիւններից ազատելու համար Մոսունի հայ գիւղի ժողովրդին առած դիմեցին դէպի Ռուսաստան, սակայն սրանք հանդիպելով ռուս սահմանապահ զօրքերին և պլաստուն կօզակներին ունեցան ընդհարում և դրանցից մի մասը բանտարկվեց: Մեղադրվածներին պաշտպանելու համար հրաւիրված էին Գրուզենբեր և Մէլիք-Աղամալեան: Երեկոյեան ժամը 7-ին վերսկսված դատավարութիւնը տևեց մինչև ժամը 9-ը, և կարճ խորհրդակցութիւնից յետոյ դատարանը արդարացրեց բոլոր 29 մեղադրվողներին»:

«Մշակի» ներկայ համարում վերջանում է Ego-ի «պատճառներ և հետևանքներ» յօդուածը, որ տպվել էր «Դրօշակ» Թերթում և ուղարկել մեզ հեղինակի ձեռքով արած մի քանի փոփոխութիւններով: Յօդուածը «Մշակում» տպվեց մի քանի անհրաժեշտ յապաւումներով:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարտի 6-ին, առաւօտեան ժամը 10-ին Փիթոեանների հաւատարմատար Յովհաննէս Յովսէփեան Պետրոսեանը յայտնեց 4-րդ քաղաքամասի ոստիկանութեանը, որ ամսիս լոյս 6-ի գիշերը ժամը 4-ին Փիթոյեանի գրասենեակի մուտքի դրանը (Լերմոնտովսկի փողոց, սեփ. տուն) մօտեցան 2 անյայտ չարագործներ գրասենեակ մտնելու նպատակով այնտեղ կանգնած պահապան Ավդալ Մկրտչեանը նրանց Թոյլ չը տուեց ասելով որ գրասենեակում մարդ չը կայ և առաջարկեց նրանց հեռանալ, որից յետոյ չարագործներից մէկը յարձակվեց պահապանի վրա և ուզում էր բէբութով վիրաւորել, բայց պահապանը, փայտով խփելով չարագործի ձեռքին կարողացաւ ազատվել: Այդ ընդհարման ժամանակ պահապանի մօտեցաւ միւս չարագործը, շէշը ձեռքին և մտադրվեց շէշով խփել նրան, բայց պահապանը այս անգամ էլ փայտով խփելով նրան, շէշը կոտրեց, որից Թափվեց նաւթ: Վերջը 2 չարագործները միասին յարձակվեցին պահապան Մկրտչեանի վրա, վայր ձգեցին նրան և գրպանից հանեցին 43 րուբլի, խլեցին նրանից ոչխարի մորթուց կարված գդակը և փախան դէպի նահանգական վարչութիւնը: Պահապանի ցուցմունքներից երևաց, որ չարագործները 7 հոգին են եղել, որոնցից երկուսը կանգնած են եղել Փիթոյեանի գրասենեակից դէպի վերև, իսկ երեքը, ներքև Լերմոնտովսկի և Պասկևիչի փողոցների անկիւնում. բոլոր չարագործները չերքեզկաներով և փափախներով էին և խօսում էին ռուսերէն:

Մարտի 6-ին, առաւօտեան ժամը 10-ին Գեօրգիևսկի հրապարակով, կառքով անցնում էին Ոգուրլու գիւղի (Կարսի շրջան) բնակիչներ Կարապետ Սիմէօնեան, Համբարձում Վարդանեան, Վարդան Սիմօնեան և տաճկահպատակ Մինաս անունով մէկը: Նրանց մէջ վէճ ծագեց, որից յետոյ Միսակ Սիմօնեանին դանակով մահացու վէրք հասցրեց կրծքին և իջնելով կառքից անյայտացաւ: Սիմօնեանին տարել են Միքայէլեան հիւանդանոցը:

Մարտի 6-ին, երեկոյեան ժամը 10-ին Երուսաղիմսկի փողոցի վրա, Երուսաղիմ եկեղեցու մօտ գտել են իգական սեռի 5 ամսական երեխայ: Երեխան ուղարկված է Օլգինսկի մանկաբարձական ինստիտուտը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սուլթանը և Շուէյցարիան.—Շուէյցարական Դաշնակցութեան մօտ Թիւրքաց դեսպանը՝ դաշնակցական կառավարութիւնից պահանջել է յանձնել տասնմեկ անձանց, որոնց որոնում է Թիւրքական դատարանը իբրև մեղսակից Սուլթանի անձի դէմ կատարված սպանութեան փորձի: Դաշնակցական խորհուրդը յայտնել է Թիւրքաց դեսպանին, որ անկարելի է կատարել Թիւրքական պահանջը, որովհետև Դաշնակցական օրէնքը Թոյլ չէ տալիս յանձնել քաղաքական յանցաւորներին:

Ֆրանսիա: Ինչպէս արդէն գիտենք, Ֆրանսիայում կազմվեց նոր մինիստրութիւն: Նոր կաբինետի գլուխ անցաւ Սարրիէնը, որ կարողացաւ կազմել այնպիսի մինիստրութիւն, որ պէտք է յենվէ բացառապէս ձախ կողմի վրա: Հանրապետական կուսակցութեան աջ և ձախ Թևերը միմեանց անվստահաբար էին վերաբերվում, ուստի և դժուարութիւններ ծագեցին մինիստրութիւնը կազմելիս. ուստի Սարրիէնը ստիպվեց աջ և ձախ զիջումներ անել, որպէս զի կարելի լինի հետևանքի հասնել: Արմատականները և սօցիալիստները պահանջում էին, որ ապագայ կառավարութիւնը աւելի եռանդով գործադրէ եկեղեցին պետութիւնից բաժանելու օրէնքը և իբրև երաշխաւորութիւն պահանջում էին, որ ներքին գործերի մինիստրի պաշտօնը յանձնվի ծայրահեղ ձախակողմին. աջը՝ հակառակ էր դրան. Նրա անգամ Պուանկարէին առաջարկվեց ֆինանսների պորտֆէյլը, բայց դրանով նա չը գոհացաւ: Պէտք եղաւ նոր զիջումներ անել, մտցնելով կաբինետի մէջ դեմօկրատիական դաշնակցութեան շատ անդամներ, դրանով Սարրիէնը կտրեց աջ Թևի դիմադրութիւնը և մինիստրութեան մէջ մտաւ արմատական-սօցիալիստ Կլեմանսոն և սօցիալիստ Բրիանը: Այժմ տանք մի քանի տեղեկութիւններ նոր կաբինետի մի քանի անդամների մասին:

Սարրիէնը մի քանի անգամ եղել է պարլամենտի փոխ-նախագահ և մինիստր: Նա միակ տաղանդի մարդ է մօտ 66 տարեկան, ուստի նա, իբրև մինիստր-նախագահ դժուար Թէ ղեկավարի դեր կարողանայ խաղալ: Այդ դերը, անշուշտ, կը խաղայ Ժորժ Կլեմանսօն: Նա միայն մի տարեկանով փոքր է Սարրիէնից, բայց դեռ լի է եռանդով: Փայլուն ձիրքերի տէր մարդ,և սկսել է իր պարլամենտական ասպարէզը 1871 Թ. ու շուտով նա դրաւել է ծայրահեղ ձախակողմեան պետի կոչումը: Նա յայտնի է «մինիստրութիւններ կործանող» մականունով: Պանամի պատմութիւնը մի քիչ խախտեց Կլեմանսօյի համբաւը, որովհետև նա մօտ ծանօԹ էր այդ պատմութեան մէջ խառնակված անձանց մի քանիսի հետ. 1893 Թւի ընտրութիւնների ժամանակ նա սևացաւ և մինչև 1903 Թիւը նա այլևս իր Թեկնածութիւնը չը դրեց, իսկ այդ Թւին ընտրվեց սենատոր: Բայց Կլեմանսօն մի և նոյն ժամանակ փայլուն հրապարակախօս է: 1880 Թ. մինչև 1898 Թ. նա խմբագիր էր Justice լրագրի, յետոյ գլխաւոր աշխատակից Aurore-ի, այնուհետև սկսեց հրատարակել Bloc Թերթը, իսկ այժմ խմբագրում է դարձեալ L'Aurore յայտնի լրագիրը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

7 մարտի

ԽԱՐԿՈՎ, 6 մարտի: 19 շրջանների 4228 ընտրողներից եկան 123 հոգի: Ընտրված են 10 գիւղացի և մի փաստաբան: Քուէարկված են զեմստվայի երկու կառավարիչներ և դատաստանական պալատի անդամը:

ՑԱՐՍԿՈՅԵ-ՍԵԼՕ, 6 մարտի: Կայացաւ գաւառի շրջանային խորհուրդների լիազօրների համաժողովը. ներկայ էին ընդամենը 30 հոգի, որից 18, ռուսներ իսկ 13 ֆիններ էին. ընտրվեցին 2 ռուսներ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մարտի: Ռուսաց հեռագրական գործակալութեան հաղորդած այն լուրը, որ իբր Թէ մտադրվում է Մինիստրների Խորհրդի դիւանատունը միացնել Պետական Խորհրդի դիւանատան հետ—հիմքից զուրկ է: Լօնդօնի խորհրդատու դեսպան արքունի սենեկապետ Սալօնովը նշանակվում է մինիստր,-գործակալ պալատի մօտ:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ, 6 մարտի: 3000 բանւորներից երէկ, ընտրութիւններին ներկայ էին միայն 50-ը: Ընտրութիւն չը կայացաւ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մարտի: Մարտի 7-ին հրատարակված են Բարձրագոյն հաստատված ընկերակցութիւնների, միութիւնների և ժողովների վերաբերեալ ժամանակաւոր կանոնները:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ, 7 մարտի: Կայացաւ սահմանադիր-ռամկավար կուսակցութեան նախընտրական ժողովը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մարտի: Պետական Խորհուրդը քննութեան առաւ ֆինանսների մինիստրի առաջարկութիւնը՝ փոխելու ազնուականների և գիւղացիական բանկերի տուած փողերի փոխառութեան հիմունքները: Այսուհետև փոխառութիւնը լինելու է ոչ կանխիկ փողերով: Բանկերին իրաւունք է տրվում փոխառութիւններ անել. իսկ գիւղացիական բանկը, բացի դրանից, կարող է նախապէս վճարել իր հաշւին ձեռք բերած հողերի համար, որից յետոյ այդ հողերը ծախում է գիւղացիներին միայն տոկոսային Թղթերով, սովորական գնով: Ազնուականների բանկը փոխառութիւն է անում գրաւական Թերթիկներով: Գիւղացիական բանկը օպերացիա է կատարում 5% կարճ ժամանակեայ պարտաւորութեամբ, որ գնջվում է 15 տարում հաւասար մասերով, սկսած բաց Թողնելուց 6-րդ տարուց, իրաւունք ունենալով հինգ տարուց յետոյ վճարել իսկական դրամագլուխը միանգամով: Տոկոսային Թղթերի տեղ, գիւղացիական բանկի յաճախորդները իրաւունք ունեն ստանալ բանկի առանձին անուանական պարտաւորագրերը՝ կալուածքը վաճառողներին հանձնելիք գումարի վճարման համար: Անուանական պարտագրութեան յատկացվում է 6%- շահ: Իսկ այն հարցի առիթով Թէ ինչ Թղթերով կատարել վճարները գիւղացիական բանկի օգնութեամբ,—Պետական Խորհուրդը կարողացաւ գալ միաձայն եզրակացութեան, որով և այդ հարցի մանրամասնութիւնների քննութիւնը յետաձգված է մարտի 8-ին:

ՍԱՄԱՐԱ, 5 մարտի: Գործակատարների նախընտրական ժողովը ընդհատեցին սօցիալ-դեմօկրատները:

ՎՈԼՈԳԴԱ, 6 մարտի: Խոշոր հողատէրերի համաժողովին ներկայ էին 42 հոգի: Ընտրված են նահանգական և գաւառական պարագլուխները, հոկտ. 17-ի դաշնակցութեան անդամներ և մի քահանայ:

ՄԱԿԱՐԵՎ, 6 մարտի: Քաղաքային ժողովին ընտրվեց սահմանադիր-ռամկավար կուսակցութեան անդամ Սաֆօնովը:

ԼԻՊԵՑԿ, 6 մարտի: Նախընտրական ժողովին մասնակից են արած 2 սօցիալ-դեմօկրատներ և հոկտ. 17-ի կուսակցութեան մէկ անդամը:

ԽԱՐԿՈՎ, 7 մարտի: Ստարոբէլսկի գաւառի 2000 հողատէրերից ներկայ էին 70-ը: Ընտրված են 18 քահանաներ, մի գիւղացի և մի ազնուական:

ԿՈՒՐՍԿ, 7 մարտի: Պաշտօնական: «Русск. Слово» 62-րդ №-ում սեփական Թղթակցի հեռագիրը ուղղակի մտացածին է: Ոստիկանութիւնը և վարչութիւնը չեն խառնվում և չեն ճնշում ընտրութիւնները:

8 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի: Պետական Խորհուրդը քննեց մինիստրների խորհրդի ենթադրութիւնը՝ Թողնելու երկաթուղային վարչութեան տարիֆային գործերի և տարիֆային կօմիտէտային խորհուրդը. ֆինանսների մինիստրութեան մէջ Պետական Խորհրդի անդամներից մի քանիսը հարկաւոր էին համարում խնդրել Բարձրագոյն հաճութիւն՝ դադարեցնելու վերոյիշեալ հաստատութիւնները առևտրի մինիստրութեան յանձնելը և յանձնարարելու հարկաւոր վարչութիւններին քննել այդ հարցը մանրամասնորէն, իսկ միւսները գտնում էին, որ առևտրի մինիստրութիւնը չէ հետաքրքրվում երկաթուղիների շահի և անդէֆիցիտ պետական բիւջէ մտցնելու խնդիրներով, որի համար և մինիստրների խորհրդի ենթադրութեան պէտք է հաւանութիւն տրվի:

ՄԻՆՍԿ, 7 մարտի: Հրէայ ընտրողների ժողովը վճռեց բոլոր միջոցներով ամբոխին հասկացնել, որ հարկաւոր է մասնակցել ընտրութիւններին: Վճռված է ընտրել միայն հրէաներ և ամեն միջոց գործ դնել, միւս կուսակցութիւնների հետ նախապէս համաձայնութեան գալով, որպէս զի Դումայի տեղերից մինը հասնի և հրէայի. իսկ երբ այդ բանը չաջողվի, ձայն տալ սահմանադիր-ռամկավար կուսակցութեան անդամներին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի: Պրինց Կոնստ. Պետր. Օլդենբուրգսկու աճիւնը կը Թաղվի մարտի 11-ին: Այսօր Ցարսկոյէ Սելօ է մեկնում Զագօվի շրջանի, Պսկովի նահանգի, Խոլմսկի գաւառի գիւղացիների պատգամաւորութիւնը:

ՄՈՍԿՎԱ, 7 մարտի: Քաղաքի կենտրոնում, փոխադարձ վարկի ընկերութեան մէջ, զբաղմունքից յետոյ երեսուն ատրճանակներով զինված 25 մարդ: Երկիւղ տալով ծառայողներին, չարագործները կողոպտելով գանձարանը—850,000 ր. ոսկիով և վարկային Թղթերով, անպատիժ անյայտացան: Այդպիսով բոլոր բանկերում դրած զինված պաշտպանութիւնը անօգուտ երևաց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի: Պաշտօնական: Մարտի 1-ին կայսրին ներկայացաւ Եկատերինօսլավսկու ազնուականների պատգամաւորութիւնը: Լսելով ամենախոնարհ ուղերձը և ազնուականների նահանգական պարագլխի ամենախոնարհ դիմումը՝ որ խնդրում էր աւելացնել Պետական Խորհրդի ազնուական անդամների Թիւը—կայսրն ասաց.

«Պետական Խորհրդի ազնուական անդամների Թիւը աւելացնելու համար ձեր միջնորդութեան բաւարարութիւն տալը կարող է յարուցել միւս դասակարգերի արդար դժգոհութիւնը, ինչպէս օրինակ, առևտրա-արդիւնաբերական դասակարգի՝ որը նոյնպէս միջնորդում է աւելացնել իր ներկայացուցիչների Թիւը Պետական Խորհրդի համար: Ես Պետական Խորհրդի համար ազնուականների ներկայացուցիչների Թիւը Իմ ցուցմունքով 18 է լինելու, հաշւի չառնելով, որ զէմստվային գործիչներին, որոնցից պէտք է ենթադրել ընտրված են ըստ մեծի մասին ազնուականներ, տրված է 34 ձայն: Իսկ ինչ վերաբերում է կարգացած ուղերձին, ես լիովին հասկանում եմ Եկատերինօսլաւի և ուրիշ նահանգների ազնուականների ծանր կացութիւնը, որ հետևանք է գիւղացիական անկարգութիւնների, և հրամայել եմ քննել առանձին ժողովում այն օժանդակիչ միջոցները, որ կարելի է ձեռք առնել գիւղացիների տնտեսութիւնը վերականգնելու համար: Այդ տեսակէտից Իմ սրտանց ցանկութիւնն է ձեզ օգնութեան գալ, յայտարարում եմ ձեզ արտայայտել Եկատերինօսլաւի ամբողջ ազնուականութեան Իմ անկեղծ շնորհակալութիւնս նրա ազնւորէն զգացմունքների համար և յայտնել նրան, որ Ես երբեք չեմ մոռանալ նրա՝ հայրենիքի և գահին մատուցած լուսաւոր և նպաստակ ծառայութիւնները, որոնց շնորհիւ նա վերապահեց առաջնակարգ դասակարգի անունը և մնաց Պետական կարգի հաստատ սիւնը»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի: Մարտի 1-ին կայսրին ներկայացաւ Նիժնի-Նովգորոդի ազնուականութեան պատգամաւորութիւնը. Կայսրը բարեհաճեց ասել հետևեալը. «Յայտնեցէք Նիժնի-Նովգորոդի ազնուականութեան Իմ անկեղծ շնորհակալութիւնս նրա արտայայտած զգացմունքների համար: Կրկնում եմ Ես ձեզ այն, ինչ որ ասել եմ նման պատգամաւորութեան. բոլոր դասակարգերը հաւասար են Իմ առաջ, նրանց բարեկեցութիւնը և կարիքները մօտ են Իմ սրտին: Գիտեմ, որ մի քանի նահանգներում տեղական ազնուականութիւնը խիստ վնասվեց ջարդից. Իմ հրամանով կազմված է մի խորհրդակցութիւն, որը կորոշէ այն միջոցները, որոնցով կարելի է օգնութեան հասնել վնասվածներին, որպէս զի նրանք վերստին սկսեն իրանց տնտեսութիւնը: Տալիս եմ մեծ նշանակութիւն տեղական ազնուականութեան և նրա գործունէութեան, և գտնում եմ որ ձեզանից իւրաքանչիւրը, որ իր աշխատանքները և ազդեցութիւնը տարածում է տեղական միջավայրի վրա, հէնց դրանով օգտակար ծառայութիւն է մատուցանում հայրենիքին»: «Русск. Госуд.»-ի ասելով, մարտի 1-ին կայսրին ներկայացաւ Վոլոգոդսկի գիւղացիների պատգամաւորութիւնը, խնդրելու համար պաշտպանութիւն յեղափոխականների կամայականութիւնից: Կայսրը բարեհաճեց յայտնել, որ կառավարութիւնը ձեռք է առնում ամեն միջոց ճնշելու յեղափոխութիւնը: Սակաւահողութիւնը յայտնի է Նորին Մեծութեան, բայց գիւղացիները կարող են հաւատացած լինել, որ նրանց կարիքները ուշադրութեան կառնվեն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի: Պաշտօնական: «Правит. Вѣст.» տպված է Բարձրագոյն ռէսկրիպտ զինուորական մինիստրի անունով հետևեալ բովանդակութեամբ. «Ալէքսանդր Թէօդորովիչ. Կայսրութեան ազգաբնակութեան ընդհանուր զինուորական ծառայութիւնը Թեթևացնելու նպատակով, Ես բարւոք համարեցի կրճատել ցամաքային զօրքերի միջտական ծառայութեան ժամանակամիջոցը, որոշելով երեք տարի հետևակ զօրքում և հեծյալ արտիլլէրիայում, իսկ չորս տարի զինուորական կազմութեան մնացած մասերում, և ցամաքային զօրքի պահեստի գործը բաժանել երկու կարգի այնպէս որ փոքր հասակի պահեստի զինուորները նշանակվեն ըստ կարելւոյն լրացուցիչ դաշտային զօրամասերում, իսկ հասակաւորները լրացուցիչ պահեստի զօրքերում: Ընդամէն հրամայում ենք ձեզ հէնց այժմ, ծովային և ներքին գործերի մինիստրների հետ համաձայնութեան գալով, մշակել մի ենթադրութիւն իմ ցոյց տուած միջոցները կենսգործադրելու մասին, և անյապաղ առաջարկել այդ ենթադրութիւնը օրէնսդրական կարգով ի հաստատութիւն, որպէսզի մշտական ծառայութեան ժամանակամիջոցի աստիճանաբար կրճատումն կարելի լինի ձեռնարկել այս տարի: Սրա հետ միասին հրամայում ենք հէնց այժմ և եթ ձեռք առնել հարկաւոր միջոցները աստիճանաբար ազատելու զօրքը իր հոգացողութեամբ զգեստների և կօշիկներին պատրաստելուց, որպէսզի զինուորները որքան կարելի է աւելի շատ ժամանակ ունենան զինավարժութեամբ պարապելու: Ես հաւատացած եմ, որ իմ զօրքի զինուորական կառավարիչների ուշադիր առաջնորդութեան և բոլոր օֆիցէրների փորձված ջանքերի շնորհիւ մշտական ծառայութեան ժամանակամիջոցի կրճատումը վնաս չի պատճառի զինուորների կրթութեան և վարժութեան, որ կը յատկացվեն տնտեսական աշխատանքների համար: Մնում եմ դէպի ձեզ մշտապէս երախտապարտ»: Իսկականի վրա Նորին Մեծութեան սեփական ձեռքով ստորագրված է «ՆԻԿՈԼԱՅ» Ցարսկօէ Սէլօ, մարտի 7-ին, 1906 Թ.

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մի երիտասարդ, որը անցեալ տարվայ սոսկալի ընդհարումներից զրկված է իր բոլոր կարողութիւնից, խնդրում է տալ իրան մի որ և է պաշտօն՝ այգեպանութեան, հողագործութեան, գինեգործութեան և կամ գրագրութեան, որով հնարաւորութիւն ունենայ Թէ կերակրել իր ընտանիքը և Թէ դարմանել իր հիւանդ կնոջն ու երեխաներին: Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը: 2—2

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով):

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 18 ր. գիշ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր. գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».

13/26 ին մարտի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 4-ին, «Guadiana» շոգենաւը, հանդիպելով Տրապիզոն, Սամսօն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Քալամաթա, Մարսէյլ, Հավր և Լօնդօն:

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները՝ մինչև Պարիզ, նոյնպէս և մինչև Շանգհայ, (Չինաստանում), Վլադիվօստոկ գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Ցակորեանին, նախկին Արծրունու գալէրէյում, Թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ Թիւ 608: Գրասենեակը բաց է 10—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից: 1—1

ԴԵՌ 1891 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐՎԵԼՈՒ ԷՐ ԶԱՆԱԶԱՆ ԳՈՅՆԵՐՈՎ

„ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

Պատկերը, որ այն ժամանակ ինձանից միանգամայն անկախ պատճառով լոյս չը տեսաւ: Այժմ 14 տարի անցնելուց յետոյ վերջապէս աջողվեց սկսել «ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-ի տպագրութիւնը, բայց շատ սակաւաթիւ քանակութեամբ, այն էլ միայն նախապէս բաժանորդ գրվողների համար, ուստի ցանկացողները դիմելու են՝ Тифлисъ Вельяминовская № 24. Вардану Варданяну. Գինն է հինգ րուբլի ամեն ծախսով: Նախապէս կարելի է ուղարկել մի մասը:

ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Պատկերի տպագրութիւնը շատ դժուար և բարդ լինելու պատճառով պատրաստվում է արտասահմանում: Գոյների Թիւն է 90—98, մեծութիւնն է 63×50 սանտ: «ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերը մի և նոյն ժամանակ ծառայելու է որպէս օրինակ կանվայի վրա կարելու համար:

Բաժանորդագրութիւնը ընդունում է Թիֆլիսում՝ Эриванская пл. обувный магазинъ Абовянца, իսկ Բագու՝ Кондитерская Бр. Филиппосянцъ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵԱՆԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Յ. Մ. ՀԻՍՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՀԱՐԱՎԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և ջղայինց հ.
ԴՈՒՆ-ԲԺՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Դ. Ե. ԳՈՒՐԳԵՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Ց. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համաճարակային (կոնտագիօզ) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

„ԱՐԳԱՍԻՔ“
Գրական, գիտական, հասարակական
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Առաջին փորձնական համարը լոյս կը տեսնի Զատկին. ապա, սեփական գրաշարներ և նոր տառեր ունենալով,—յուլիսի մէկից կանոնաւոր: Կէս տարվան բաժանորդագինը. Թիֆլիսում՝ 1 ր. 50 կ., Ռուսաստանում 2 ր., արտասահման 7 ֆր.:

Դիմել՝ Тифлисъ, редакція «Аргасикъ», Судебная ул. № 54.

Խմբագիր-հրատար.՝ Ալ. Փարղեանց

Լոյս տեսան «ԿԵԱՆՔ»-ի գրադարանից
1) Վօղօվօզօվ. «Ընդհանուր ընտրողական իրաւունքը Արեւմտքում». Թարգմ. ռուսերէնից Կ. Միքայէլեանցի գինն է՝ 10 կ.:
2) Բ. Իշխանեան.—«Տնտեսական զարգացման Փազերը». 15 կ.:
Դիմել «Մուրճ»-ի խմբագրատունը, Գուտտենբերգի, կենտրոնական և այլ հայ գրավաճառանոցները: (շ.կ.ե.) 3—3

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկեվիչա փող. № 33/15 տ. Միքրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա. օ.) 50—100

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“
գրախանութում վաճառվում են Րաֆֆիի գրքերից.

«Սամուէլ», հատ. ա. բ. և գ. մի գրքի մէջ ամփոփած—3 ր. 50 կ.: «Ոսկի Աքաղաղը», 1 րուբլի: «Դաւիթ-բէգ», հատ. ա. բ. և գ. վերջարանով—3 ր. 50 կ.: «Կայծեր», հատ. ա. 2 ր., հատ. բ. և վերջ—3 ր.: «Խենթը» և «Ջալալեդդին» մի գրքի մէջ ամփոփած 2 ր., «Խաչագողի Յիշատակարանը», հատոր ա. բ. գ. և գ.—2 ր.: «Պսակ ժողովածու»—50 կոպ.: «Ազատութեան մասին», Միլլի, 1 ր. 20 կ., «Ռուսերէնից հայերէն» բառարան Յ. Դադաշեանի 8 հատոր (9-րդը կը լինի ապրիլին) 7 ր., Պօստի ծախսով 8 ր., Հայերէնից—ռուսերէն 5 ր., (լոյս է տեսել առաջին պրակը): «Անի», լուսանկար Բիւրքճեանի, (40 հատ, ստերեօսկօպով նայելու համար)—15 կ., Մանկական պարտէզ», իւղ. Արղութեանի 3 ր. 50 կ., պօստի ծախսով—4 ր.: Եղիշէ վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին և քննադատութիւնը Միքայէլ փաշայի Փորթուգալ, պօստի ծախսով 3 ր. 50 կոպէկ: 2—2

ԿԵՖԻՐ
Բժիշկներ Սօկոլեար, Բոտկինեան, Շմիտ, Բիլի և ուրիշ հեղինակութիւնից երևում է, որ կեֆիրը չափազանց նպաստում է կշռի աւելանալուն. կեֆիրը գործ է ածվում Թոքերի հիւանդութեան, աղիքների կատառի, արեան պակասութեան, Չրջրուկի, (золотуха) դալկահարութեան, ուժասպառութեան ժամանակ և առհասարակ լաւ ներգործութիւն է ունենում ջղերը հանգստացնելու վրա: Կարելի է ձեռք բերել Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մելիքեանի փող. սեմինարիայի դիմաց: Ցանկացողներին կարելի է ուղարկել իրանց բնակարանը:
(հ.կ.) 9—20

Դիմնազիա աւարտած մի
ՕՐԻՈՐԴ
ցանկանում է դասեր, կամ որ և է պաշտօն ունենալ՝ կասսիրշայի կամ գրասենեակներում: Գիտէ տպել նաև Ռէմինգտօնի վրա: Հասցէն՝ Тифлисъ, Бебутовская у. № 48 Даніелянъ.
(ե. հ. կ.) 2—3

ԲԺԻՇԿ
Տ. Խախանեան
Ներքին, երեխայոց և վեներակ. հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը:
Վելեամինովսկայա փողոց, № 22, Նաւտիկովի տանը:
(չ. ու. կ.) 16—15

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միքայել Գեղեվանօվի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը, Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում: Սեփական տ., տէլէֆօն № 791: (ա. օ.) 81—150

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱՄՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային և սիֆիլիսական հիւանդութիւնների վերադարձել է արտասահմանից և ընդունում է հիւանդներին ցերեկվայ 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը: Կուկիա Սեմեօնօվսկի փողոց № 20:
(ա.օ.) 8—10

Լոյս տեսաւ
«ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ»
Գինը 7 կոպ. ճանապարհածախսով 10 կոպ. կարելի է մարկայով: Դիմել հեղինակին Александрополь, Архимандриту Арсену Клитчяну և Թիֆլիսի գրավաճառներին. 2—3

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2,

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Элекропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15